Ճանաչել գիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՓԱՐ

22-23(597-598)
26.08.2020
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ ● Lusarar

Պաշտոնական

ԿՎԵՐԱԿԱՌՈՒՑՎԻ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՇԵՆՔԸ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանն օգոստոսի 18-ին ընդունել է Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի ստեղծագործական կոլեկտիվի անդամներին:

Նախագահը նշել է, որ, նախընտրական փուլում տված իր խոստման համաձայն, գալիք տարվա ընթացքում կմեկնարկեն պետական դրամատիկական թատրոնի շենքի կապիտալ վերակառուցման աշխատանքները, որոնք նախատեսվում է ավարտին հասցնել 2022 թվականին: Արայիկ Հարությունյանի խոսքով՝ վերակառուցման արդյունքում շենքի պատմաճարտարապետական տեսքը որևէ փոփոխության չի ենթարկվի, այն ապահովված կլինի ժամանակակից և հարմարավետ պայմաններով:

Ողջունելով Հանրապետության նախագահի որոշումը՝ թատրոնի աշխատակիցները ներկայացրել են ոլորտում առկա խնդիրները՝ մասնավորապես աշխատավարձերի, սեփական եկամուտները ներքին կարիքների համար օգտագործելու, տրանսպորտային միջոց ունենալու, ինչպես նաև թատերական ստուդիայի վերաբացման վերաբերյալ հարցերը:

Երկրի ղեկավարը հավաստիացրել է, որ բարձրացված բոլոր խնդիրներն անպայման լուծումներ են ստանալու, և հանրապետությունում թատերական կյանքի աշխուժացման համար ստեղծվելու են բոլոր բարենպաստ պայմանները: Ա. Հարությունյանի դիտարկմամբ՝ պետք է վերականգնվեն լավագույն ավանդույթները, և, բացի մայրաքաղաքից, թատրոնը պարբերաբար ներկայացումներով պետք է հանդես գա նաև շրջկենտրոններում ու գյուղական համայնքներում:

Նախագահ Հարությունյանը հանձնարարել է քաղաքաշինության նախարարին կարճ ժամանակահատվածում ավարտել պետական դրամատիկական թատրոնի շենքի նախագծի մշակման աշխատանքները:

Հանդիպմանը մասնակցում էին ԱՀ կրթության, գիտության և մշակույթի նախարար Լուսինե Ղարախանյանը, Ստեփանակերտի քաղաքապետ Դավիթ Սարգսյանը, պաշտոնատար այլ անձինք:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մշակույթը՝ որպես մարդու գոյության և գործունեության միջավայր, էապես կարևոր է սերնդի ինքնության ու էթնիկական սոցիալականացման, էթնոմշակութային առաջնահերթությունները պահպանելու և փոխանցելու առումով:

ԱՀ ԿԳՄ նախարար Լուսինե Ղարախանյանը մշակութային ոլորտում իրականացվող պետական քաղաքականության մասին տեղեկացնում է. «Ունենք մշակութային քաղաքականության հայեցակարգ, որի հիման վրա մշակվել է ռազմավարական ծրագիրը, որն էլ շուտով ներկայացվելու է ԱՀ կառավարության հաստատմանը: Այս ծրագրի առանցքում ազգային ինքնության պահպանման պետական քաղաքականությունն է, մեր հոգեմտավոր ներուժի, արժեհամակարգի, ազգային ինքնատիպությանը վերաբերող գաղափարների կենսականացումը»:

Մշակութային քաղաքականության հիմնական ուղղություններից ԿԳՄ նախարարն առանձնացնում է.

- մշակութային ժառանգության պահպանությունն ու պաշտպանությունը, վերարտադրությունն ու հանրահռչակումը,
- մշակութային ծառայությունների ապակենտրոնացումը, համաչափ զարգացումը, գյուղական համայնքներում մշակութային կյանքի աշխուժացումը,
- համահայկական և միջազգային համագործակցության ընդլայնումը, մշակութային Արցախի ներկայացումն արտերկրում,
- մշակութային տեղեկատվական քաղաքականության ակտիվացումը:

Անդրադառնալով խնդիրներին՝ Լ. Ղարախանյանն ընդգծում է. «Ոլորտում ունենք օրենսդրական մի շարք բացթողումներ: Մշակույթի զարգացումն աշխարհի բազմաթիվ երկրներում կապված է մասնավոր հատվածի հետ: Մեզ մոտ դա չկա կամ կանոնակարգված չէ: Մենք պետական աջակցությունից զատ աջակցություն ստանում ենք սփյուռքի մեր հայրենակիցների շնորհիվ ձևավորված հիմնադրամներից: Այո, մշակույթի ոլորտի թիրախային հարցերը շատ են, և ոլորտը ռազմավարական առումով բարելավման կարիք ունի»:

ԿԳՄ նախարարը վճռական է մշակույթի գործիչներին սոցիալական երաշխիքներով ապահովելու, կադրային լուրջ քաղաքականություն վարելու, մշակութային բնագավառները քարտեզագրելու գործընթացը սկսելու հարցերում: Իսկ որ արժեքային զիջողականությունից և հարմարվողականությունից հրաժարվել է պետք, դրանում համոզված է նախարարը:

- Մեզ քանակական հատկանիշներ պետք չեն: Մեզ պետք է գաղափարականացված մշակույթ,- հավելում է Լ. Ղարախանյանը:

Ի լրումն մշակութային ոլորտում տարվող պետական քաղաքականության մասին տեղեկատվության, նախարարն ասում է, որ COVID-19-ի պայմաններում ԿԳՄ նախարարության առջև ծառացած են նաև մի շարք նոր խնդիրներ, որոնց ելքը մշակութային ադապտացիան է այն նորարարական հատկությունների միջոցով, որոնք կնպաստեն հասարակության մշակութային պահանջմունքների բազմակողմանի բավարարմանը: Այս առումով համապատասխան աշխատանքներ են տարվում վիրտուալ հարթակում թանգարանների ստեղծման, գրադարանային ֆոնդի թարմացման և առցանց համերգների կազմակերպման ուղղությամբ:

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԱՌԱՋԻԿԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Օգոստոսի 20-ին, ԱՀ ԿԳՄ նախարար Լուսինե Ղարախանյանը հյուրընկալվել է ԱՀ նախագահի՝ կրթության, գիտության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերով խորհրդական Արմեն Սարգսյանի մոտ: Հանդիպմանը ներկա էին ԱՀ ԿԳՄ մշակույթի գծով փոխնախարար Գայանե Գրիգորյանը և մշակույթի հարցերով խորհրդական Մելանյա Բալայանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ԱՀ նախագահի 2020-2025 թվականների մշակույթի ոլորտի ծրագրային դրույթների կենսականացմանն ուղղված առաջիկա նպատակներն ու անելիքները:

ԱՀ նախագահի խորհրդական Արմեն Սարգսյանը, անդրադառնալով Ստեփանակերտի պետական դրամատիկական թատրոնի՝ գալիք տարի նախատեսվող վերակառուցմանը, կարևորել է համապատասխան գերատեսչության գործուն մասնակցությունը կատարվելիք աշխատանքին:

Հանդիպման բուն թեման, սակայն, Արցախում թանգարանային գործի զարգացման ռազմավարությանն էր վերաբերում. առաջիկայում ավարտուն տեսք կստանա Արցախի պատմաերկրագիտական թանգարանի նոր շենքը, ինչը նշանակում է, որ թանգարանն այսուհետ պիտի գործունեություն ծավալի նոր ու ժամանակակից սկզբունքներով: Հանդիպման մասնակիցները համակարծիք են՝ Արցախի պատմաերկրագիտական թանգարանը այսուհետ նաև որպես գիտական կենտրոն պետք է ծառայի բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրված են Արցախի պատմությամբ ու մշակույթով:

Թանգարանի պլանի ստեղծման, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման ու կիրառման խնդիրները լուծելու համար ԱՀ ԿԳՄ նախարարությունն առաջիկայում կհամագործակցի հայաստանյան թանգարանային գործի լավագույն գիտակների հետ, ինչի արդյունքում Արցախի նորաբաց թանգարանը այցելուներին կներկայանա նորովի:

Արմեն Սարգսյանի խորհրդով առաջիկայում ԱՀ ԿԳՄ նախարարությունում ձեռնամուխ կլինեն Արցախի թանգարանային քարտեզի ստեղծմանը. սա ենթադրում է թեմատիկ թանգարանների նախագծում Արցախի շրջկենտրոններում ու առանձին համայնքներում, որոնցում կներկայացվեն բնակավայրի պատմությունը, ազգագրական առանձնահատկություններն ու ավանդույթները: Այս թանգարանները կարող են գործել ինչպես առանձին, այնպես էլ համայնքային մշակութային տների կից:

Կվերափոխվի ու կվերանայվի նաև համայնքային մշակութային տների գործունեությունը: Պահպանելով ապակենտրոնացման սկզբունքը՝ այս կառույցները պիտի սկսեն գործել ժամանակին համաքայլ՝ մի կողմ դնելով բացառապես սոցիալական խնդիր լուծելու՝ տարիներ շարունակ ձևավորված ավանդույթը:

Հանդիպումն անցել է անմիջական մթնոլորտում: Նախանշված նպատակների ուղղությամբ առաջիկայում գործնական քայլեր կձեռնարկվեն:

ՍԿՍՎԵԼ ԵՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԸ

Օգոստոսի 17-ին ԱՀ ԿԳՄ նախարարության և Ստեփանակերտի մամուլի ակումբի համագործակցությամբ անցկացվել են վերապատրաստման դասընթացներ հանրապետության հանրակրթական դպրոցների ինֆորմատիկայի ուսուցիչների և օպերատորների համար:

Հնգօրյա վերապատրաստումներին մասնակցում էին 20 ուսուցիչներ Մարտակերտի և Ասկերանի շրջանների համայնքներից:

Դասընթացի առաջին օրը ողջույնի խոսքով հանդես է եկել ԱՀ ԿԳՄ նախարար Լուսինե Ղարախանյանը: «Ուսուցիչների վերապատրաստումը միշտ կլինի մեր կրթական ռազմավարության առաջնահերթություններից»,- նշել է նախարարը՝ հավելելով, որ օրեցօր փոփոխվող ու զարգացող աշխարհում անհնար է ժամանակի հետ համաքայլ լինել առանց շարունակական կրթության:

Օրակարգային է նաև շրջկենտրոնների ու գյուղական համայնքների համար զարգանալու, կրթվելու հավասար հնարավորությունների ապահովման խնդիրը, որի աստիճանական լուծման ուղղությամբ նախարարությունը պատրաստ է համագործակցել շահագրգիռ կազմակերպությունների ու անհատների հետ:

ԱՀ ԿԳՄՆ

Տես նաև՝ էջ 2

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՆՈՐ ՀԱՐԹԱԿ ԱՐՊՀ-ՈՒՄ

Արցախի պետական համալսարանում տեղի ունեցավ Google for education էլեկտրոնային ուսումնական համակարգ ներդնելու վերաբերյալ աշխատաժողով: Այն անցկացրել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի պետ Անուշ Սարգսյանը երկու համալսարանների միջև փոխգործակցության շրջանակում: Մեկ շաբաթ տևած աշխատաժողովին մասնակցել են բուհի պրոռեկտորներ, ֆակուլտետների, դեկանատների ղեկավարներ, աշխատակիցներ:

Ա. Սարգսյանի պարզաբանմամբ՝ այս էլեկտրոնային համակարգը եկել է ոչ թե փոխարինելու ավանդական ուսուցմանը, այլ գործիք է, որն օժանդակող միջոց է լինելու ուսումնական գործընթացն ավելի ֆունկցիոնալ դարձնելու համար հագեցնելու տարբեր հնարավորություններ:

Ընդամենը հինգ տարեկան է Google-ի ստեղծած այս հարթակը: Աշխարհի լավագույն համալսարանների հնգյակում գտնվող ԱՄՆ Արիզոնայի համալսարանը առաջինն է ներդրել, ինչպես նաև աշխարհի զարգացած շատ բուհեր կիրառում են այն որպես այլընտրանք:

Google-ի հետ վաղուց համագործակցող Ա. Սարգսյանը չորս տարի առաջ ներդրել է Խ. Աբովյանի անվան մանկավարժականում, և ԱրՊՀ-ն էլ Արցախի բուհերից առաջինը կլինի:

Էլեկտրոնային մյուս հարթակների համեմատությամբ սրա առավելություններից մեկն այն է, որ թույլ է տալիս ժամանակի և մասնակիցների անսահմանափակություն: Դա ընդհանրական գործիքակազմ է. յուրաքանչյուր դասընթացի համար ստեղծվում է էլեկտրոնային դաշտ, որտեղ տեղադրվում են ուսումնական նյութերը, դասախոսությունները, գնահատականները, տեսադասերը և այլն: «Մեկ այլ բան է առանձին-առանձին նրա հավելվածները կիրառելը, մեկ այլ բան՝ ստեղծել կառուցվածք, որ բուհը համակարգված աշխատի դրա մեջ: Այս հարթակի շնորհիվ բուհում գործող յուրաքանչյուր դասընթացի, մասնագիտության և առարկայի համար ստեղծվում է էլեկտրոնային դասընթացի դաշտ googleclassroom հավելվածի միջոցով: Այդ էլեկտրոնային դասընթացի մեջ կցվում են դասախոսները, ամբիոնը, դեկանատը, ինչպես նաև ուսանողների խումբը: Ուսումնական գործունեության մեջ դա համագործակցության ևս մի գործիք է ուսանողի և դասախոսի միջև»,- պարզաբանեց Ա. Սարգսյանը:

Հարթակը շատ հարմար է հատկապես մագիստրատուրայի ուսանողներին, որոնց համար համալսարանը պատրաստվում է դասընթացներն անցկացնել հեռավար եղանակով:

Պլանավորված է, որ սեպտեմբեր ամսվա ընթացքում ամբողջ համալսարանը այս գործիքակազմը կունենա: Աշխատաժողովի նպատակն էր սովորեցնել ինչպես այն կիրառել: Մասնակիցները ստացած գիտելիքները պետք է փոխանցեն գործընկերներին և ուսանողներին:

Ա. Սարգսյանը պատրաստակամություն հայտնեց արպի-ականների հետ միշտ կապի մեջ լինել և ծագած բոլոր հարցերին պատասխանել առցանց:

ZOOM-ԻՆ ՊԵՏՔ Է ՏԻՐԱՊԵՏԵՆ ԲՈԼՈՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ

Կարևորելով ուսուցիչների՝ ժամանակից տեխնոլոգիական գործիքներով աշխատելու հմտություններին տիրապետելու անհրաժեշտությունը՝ ԱՀ ԿԳՄ նախարար Լուսինե Ղարախանյանի հանձնարարականով նախարարության «Ինֆորմատիկա» առարկայի տեսուչ Քրիստինե Իսրայելյանը վերապատրաստման դասընթացներ է սկսել հանրապետության ուսուցիչների համար: Մասնակցում են տարբեր առարկաների մասնագետներ: Դասընթացների մեկնարկը տրվել է Հադրութի շրջանից: Օգոստոսի 11-12-ը դրանք անցկացվել են Ազոխ գյուղում ենթաշրջանի 10 գյուղերի դպրոցների ուսուցիչների մասնակցությամբ: 13-ին և 14-ին պարապմունքներն անցկացվել են Հադրութում, որոնց մասնակցել են վերին ենթաշրջանի գյուղերի ուսուցիչներ:

Օգոստոսի 17-ից դասընթացները երկու շաբաթով շարունակվում են Ստեփանակերտում՝ հ. 9 հիմնական դպրոցում: Մայրաքաղաքի հանրակրթարանների տարբեր առարկաների ուսուցչական խմբերը եռօրյա դասընթացներ են անցնում տեղեկատվական Zoom հարթակի հնարավորություններից օգտվել կարողանալու վերաբերյալ: Չնայած «Covid-19»-ի հարուցած խոչընդոտներին, մեր կրթական համակարգն անցած ուստարում կարողացավ սահուն դուրս գալ ստեղծված իրավիճակից շնորհիվ ոլորտի ղեկավարության կազմակերպչական և մանկավարժական հանրույթի տքնաջան աշխատանքի: Նախարարության կողմից արված հարցումները և ընդհանրապես շրջանառվող տեղեկատվությունները ցույց տվեցին, որ դպրոցում առցանց կրթության համար լավագույն տեղեկատվական հարթակը «Zoom»-ն է:

Zoom-ի հնարավորությունների օգտագործումն առավել լավ համակարգչով է ստացվում, քան հեռախոսով կամ պլանշետով: Ուսուցիչների մի մասն օգտագործում է վաղեմի ՆՈՒՌ ծրագրի երկրորդ փուլով բարերարի տրամադրած համակարգիչը:

Չնայած արդեն հայտարարվել է, որ նոր ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպվելու է ավանդական ձևով՝ կենդանի շփմամբ, սակայն նախարարությունը պատրաստ է նաև «Պլան-Բ»-ին՝ առցանց ուսուցմանը: «Նախարարի հանձնարարականն է՝ նոր ուսումնական տարում Zoom-ին չտիրապետող ուսուցիչ չպետք է լինի»,- ասում է տեսուչը՝ հավելելով, որ նախարարությունը հետևողական է լինելու: Նախարարության կողմից ստեղծվում է առցանց հարթակ, որի միջոցով կատարվելու է դասապրոցեսի վերահսկում: Վերահսկողությունն իրականացնելու են կրթության պատասխանատուները: Յուրաքանչյուր դպրոցի ղեկավարություն պետք է ունենա առցանց ուսուցման դասացուցակ, որպեսզի ուսուցիչը ոչ թե երբ ուզենա կամ իրեն հարմար ժամանակ անցկացնի պարապմունքը, այլ ինչպես կենդանի շփման ժամանակ՝ դասացուցակով նշված ստույգ ժամի:

Մեզ հետ ունեցած զրույցի ժամանակ դասընթացներին մասնակցող ուսուցիչներն ասացին, որ և՛ մանկավարժները, և՛ աշակերտները, և՛ ծնողները կողմ են կենդանի դասին, դրա արդյունավետությունն անկասկած է, հատկապես՝ կրտսեր օղակում: Բայց չեն անտեսում նաև հեռավարի առավելությունները. «Այն արդեն կրթական գործընթացի անքակտելի մաս է, և պետք է կիրառենք, համատեղենք առկա և հեռավար ուսուցումը»:

Բերտա Հարությունյան, դասվար.- Մինչ այդ էլ մենք Zoom-ով ենք վարել դասերը: Բայց այս դասընթացներին ավելի խորն իմացանք նրա օգտագործման ձևերի, նոր գործառույթների մասին: Լավ կլինի, իհարկե, որ կենդանի դաս լինի, ավելի արդյունավետը դա է: Բայց եթե հանգամանքների բերումով առցանց լինի, կարողանանք կազմակերպել: Դա մեզ պետք կգա կյանքում, տարբեր շփումներում. բաց դասեր կազմակերպել, լավագույն ուսուցիչների փորձին ծանոթանալ, Հայաստանում կամ միջազգային մակարդակով անցկացվող կրթական միջոցառումների մասնակցել:

Լարիսա Գասպարյան, ֆիզիկայի ուսուցիչ. - Սկզբում Viber-ով, Messenger-ով ենք հաղորդակցության մեջ մտել աշակերտների հետ, բայց տեսանք, որ Zoom-ով ավելի հեշտ է: Որպես ուսուցիչ իմանում էինք, բայց որպես աշակերտ նոր սովորեցինք: Իսկ որպես դասղեկ ծնողներին կբացատրեմ ինչպես դա անել: Անգամ եթե միշտ կենդանի դաս լինի, հեռավարն էլի պետք է գալու: Օրինակ, պատահում է, որ աշակերտն սպորտային, մշակութային միջոցառումներին մասնակցելու կամ այլ պատճառներով բացակայում է, կարող ենք երեկոյան կապվել նրա հետ և բացատրել դասը, լրացուցիչ պարապմունքներ անցկացնել, մանավանդ որ ասում են, թե դասերը 35 րոպեանոց կլինեն:

ԿԳՄ տեսուչի կողմից վերապատրաստումների հաջորդ հասցեները Մարտակերտի, Շուշիի շրջաններն են, այնուհետև ըստ անհրաժեշտության՝ մյուս շրջանները: Մարտունու շրջանն ունի իր վերապատրաստող մասնագետը, և նա է կատարում այդ աշխատանքները: Քաշաթաղի շրջանի ուսուցիչներին առաջիկայում և տարվա ընթացքում պարբերաբար կաջակցի «Այբ» դպրոցի «Քան» ակադեմիան:

«ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳ-ՊԱՐԸ» ՆՈՐ ԴՊՐՈՑՆԵՐ Է ԸՆԴԳՐԿՈՒՄ

Օգոստոսի 17-ից Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցում մեկնարկել են «Ազգային երգ-պար» առարկայի ուսուցիչների վերապատրաստման տասնօրյա դասընթացները, որոնք վարում են ՀՀ Ազգային երգ ու պարի ակադեմիայի (ԱԵՊԱ) մասնագետները. երեք պարուսույց, երկու երգուսույց:

Արցախի դպրոցներում առարկան ուսուցանվում է արդեն չորրորդ տարին: Առաջին տարում՝ 2017թ. ծրագրում ընդգրկվել էր 16 դպրոց՝ Ստեփանակերտի և շրջկենտրոնների կրթօջախները: Նախորդ ուստարում առարկան արդեն մուտք էր գործել 38 դպրոց: Իսկ նոր ուսումնականում դրանց կմիանա ևս 22 դպրոց շրջաններից (բացառությամբ Շուշիի և Քաշաթաղի շրջանների):

Թե ինչով է պայմանավորված, որ ոչ բոլոր դպրոցներում է դասավանդվում առարկան, ԱՀ ԿԳՄ երգ-երաժշտության տեսուչ Վազգեն Առաքելյանն ասաց, որ հիմնական խոչընդոտը մասնագետների պակասն է և նշված դասարաններում ոչ բավարար թվով աշակերտների առկայությունը: Դասարանում ամենաքիչը պետք է լինի 7-9 աշակերտ: Ցավոք, մենք ունենք բավական թվով դպրոցներ, որոնց միջին օղակի դասարաններում պահանջվող քանակի աշակերտներ չկան:

Դասընթացներին բնականաբար ընդգրկված են ծրագրին նոր միացած դպրոցների ուսուցիչները, ինչպես նաև նրանք, ովքեր նախորդ տարիներին անցել են 5-րդ, 6-րդ դասարանների ծրագրերը և համապատասխանաբար մեկ դասարան բարձրացել: Բոլոր երեք դասարանների համար ձևավորվել են երգի ու պարի խմբեր, և նրանց հետ պարապմունքներ են անցկացնում ԱԵՊԱ-ի երգուսույցներն ու «Կարին»-ում պարող տղաները:

6-րդ դասարանի ծրագրով վերապատրաստող պարուսույց Աբել Մաթևոսյանը ցուցադրելուն զուգընթաց ուսուցիչներին բացատրեց պարերի տեսակները, յուրաքանչյուր շարժման նշանակությունը: «Ծրագրում ընդգրկված են տարբեր ծիսական նշանակություն ունեցող և՛ ռազմական, և՛ հարսանեկան, և՛ կենցաղային պարեր: Փորձում ենք ուսուցիչներին ծանոթացնել մեր մշակույթի լայնածավալությանը»,- մեզ հետ զրույցում ասաց նա:

Վերապատրաստող խմբի ղեկավար Մանուկ Հարությունյանին արցախցիներն արդեն քաջածանոթ են: Նա ապրում է Արցախում և դասավանդում մշակութային կրթօջախներում: «Սկզբում, երբ ազգային երգ-պարը պիլոտային ծրագիր էր, լավ չէր ընդունվում հանրության կողմից, նույնիսկ քննադատություններ եղան, ինչը կարելի է բացատրել ազգային մշակույթից ժողովրդի հեռացած լինելով: Առարկայի նպատակն էլ հենց դա է՝ մատաղ սերնդին ծանոթացնել մեր ազգային մշակույթին, որպեսզի հասկանա, որ այն առանձնահատուկ է, մտնի մեր կենցաղ և դառնա ինքնաճանաչության հիմք: Աստիճանաբար այն կարծրատիպը, որ պարելը տղային արժանավայել հատկանիշ չէ, կոտրվում է: Երբ տղա երեխաները տեսնում են երկու տղամարդ ինչպես են յարխուշտա զարկում կամ ռազմական պարեր պարում, իրենք էլ են ուզում: Եվ պատահական չէ, որ այսօր վերապատրաստվող ուսուցիչների մեջ նաև երեք տղամարդ կա»,- ասաց նա:

Դասընթացներին մասնակցող ուսուցիչներն էլ իրենց գոհունակությունը հայտնեցին դպրոցում «Ազգային երգ ու պար» առարկայի թողած բարերար ազդեցության առնչությամբ: Առաջածորի դպրոցից Համեստ Անդրեասյանը, Իվանյանից Լուսինե Ասրյանը, Կովսականից Նունե Մանուչարյանը ափսոսանք հայտնեցին, որ իրենց սովորելու տարիներին հնարավորություն չեն ունեցել հաղորդակցվել ազգային արվեստին, բայց հիմա ուրախ են, որ դասավանդելով այդ առարկան՝ նպաստում են ազգային արժեհամակարգով սերնդակերտմանը: Դպրոցում չկա միջոցառում, որի զարդը չհանդիսանան ազգային երգ ու պարերը:

Վերապատրաստող ուսուցիչ Մխիթար Հակոբյանի համոզմամբ ազգային-երգ պարի առաքելությունը ոչ այնքան միջոցառումները զարդարելն է, չնայած դա էլ նրա մի կողմն է, այլ դրա միջոցով մեր հազարամյա երաժշտական ավանդույթների փոխանցմամբ մատաղ սերնդի ազգային ինքնագիտակցության և գեղագիտական ճաշակի բարձրացմանը, նրա մտավոր, հոգևոր զարգացմանն ու ազգային հոգեկերտվածքի հզորացմանը նպաստելը: «Ամենաառաջին նպատակը այս առարկայի հայրենաճանաչությունն է, ստեղծել երեխայի մեջ պարարտ հող, որ նա դառնա հայրենաճանաչ: Հայրենաճանաչ լինելով՝ դառնում են հայրենասեր»,- ասաց նա:

Երգուսույց, երաժշտագետ Կարինե Հովհաննիսյանի կարծիքով ազգային երաժշտությունը մայրենի լեզվի շարունակությունն է, լեզվի մի կողմը. «Տեխնիկայի այս դարում կորցրել ենք այդ լեզուն, քանի որ չենք գործածում, փակ է: Եթե մենք կախում ունենք հեռուստացույցից, ռադիոյից, համակարգչից, կորցնում ենք մեր ինքնակազմակերպվելու ջիղը, որի ընթացքում բնականաբար մոռանում ենք այդ լեզուն, բայց դա չի նշանակում, թե չգիտենք: Ընդամենը մի թեթև զարկ տալով բացվում է և ինքն իրեն գնում»:

Հավելենք, որ վերապատրաստման դասընթացները կարանտինի շրջանում յուրատեսակ փրկագոտի են ուսուցիչների համար, որոնք մարդկային շփման սովոր լինելով՝ համավարակի ամիսներին ստիպված են սահմանափակել:

Դասընթացները կավարտվեն օգոստոսի 28-ին քննությամբ, որը կընդունի ազգային երգ-պարի մեծ ջատագով Գագիկ Գինոսյանը:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳԻՆԸ

ՄԱԿ-Ը ՊԱՐՏԱՎՈՐ Է 21-ՐԴ ԴԱՐԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԴԱՐ ԴԱՐՁՆԵԼ

Ճիշտն ասած, նպատակ չունեի Մեծ հաղթանակի 75-ամյակի առթիվ հանդես գալ, քանի որ նրա տոնակատարության օրը խախտվել էր համավարակի պատճառով, և մեզնից յուրաքանչյուրը պարզ գիտակցում էր, թե ինչու Մեծ հաղթանակի 75-ամյակի զորահանդեսը մայիսի 9-ի փոխարեն հունիսի 24-ին կայացավ: Չնայած դա էլ խորհրդանշական էր ինձ համար, քանի որ այդ նույն օրը՝ 1945թ. հունիսի 24-ին, Կարմիր հրապարակում կատարվել էր Մեծ հաղթանակի առաջին զորահանդեսը, որին մասնակցած՝ Հայրենական պատերազմի եզրափակիչ փուլի՝ ռազմաճակատների տասը հրամանատարների շարքում էր հայ ժողովրդի հպարտությունը հանդիսացող արցախահայ Հ. Ք. Բաղրամյանը, որը շատերի խորհրդով ցանկացավ հաղթանակի առաջին զորահանդեսին մասնակցել թեհրանահայերի նվիրած ոսկյա սրով: Բայց տասը զորահրամանատարներից չտարբերվելու համար Կարմիր հրապարակ մտավ Ձլատոուցկյան սրով, ինչպես իր ընկերները: Գիտեմ նաև, որ առաջին զորահանդեսին մասնակցել է մի ղարաբաղցի՝ Բալուջա գյուղից: Կարծեմ Անդրանիկ Սարգսյան էր անունազգանունը, որը զորացրվելուց հետո երկար տարիներ աշխատել է ԼՂԻՄ ՆԳ-ում ավագի ուսադիրներով և միշտ քաղաքի դպրոցականների պատվավոր հյուրն էր: Ուրախալի է, որ հաղթանակի 75-րդ զորահանդեսին Հայաստանի Հանրապետությունից 75 հոգուց բաղկացած հատուկ զորախումբ մասնակցեց: Ցավոք, չգիտեմ, նրա կազմում արցախցի կա՞ր, թե՞ ոչ:

Այսքանը՝ ի միջի այլոց: Ինչպես վերևում նշեցի, նպատակ չունեի հաղթանակի հերթական տարեդարձի առթիվ հանդես գալ, քանի որ «պատերազմ» հասկացությանը «ոչ» եմ ասել ավելի քան 30 հոդվածներում, չնայած մանուկ հասակից սիրել եմ պատերազմական թեմաները, ինչու չէ, կինոնկարները (վավերագրական թե գեղարվեստական):

Այս հոդվածի առիթը հուլիսի 16-ին ավագ ծոռանս՝ Սամվելիկի ծննդյան 11-րդ տարեդարձի օրը, ուշացումով արարողությանը մասնակցելու եկած ստեփանակերտցի (արմատներով խնձրիստանցի) երիտասարդն է, որը կարծելով, թե ես Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներից եմ, ուղղակի շպրտեց. «Ինչի՞ համար է կռվել քո սերունդը, ո՞ւմ համար է կռվել այն ժամանակվա հայ երիտասարդությունը, որն իր արյունով է ողողել օտարի հողը, և մինչև այսօր էլ ոչ ոք չգիտի, թե որ գերեզմանաթմբում է թաղված: Ա՛յ, հիմա ուրիշ է: Հուլիսի 12-ից Բաքուն պատերազմ է սկսել: Պետք է գնալ այն դիրքերը: Նա չէր ուզում համոզիչ պատասխանս լսել, և այսօր ստիպված եմ գրավոր պատասխանել նրան և նրա նման մտածողներին ու որոշ չափով օգնել նոր ուսումնականում արիության դաս կազմակերպողներին: Իհարկե, եթե մինչև նոր ուսումնականը կորոնավիրուս կոչված համավարակը նահանջած լինի:

Ինչպես Մայիսի 9-ն է մեզ համար եռատոն, այնպես էլ այս տարի ուսումնական տարվա սկզբին է լինելու եռատոն՝ Գիտելիքի օր, ԼՂՀ հռչակման տարեդարձ, Երկրորդ աշխարհամարտի հաղթական ավարտի օր կամ 75-րդ տարեդարձ:

Հոդվածի առիթներից է նաև «Արցախի կոմունիստ» թերթի մայիսի համարը, որում և իմ մեծածավալ հոդվածը կա՝ «Մեծ Հայրենական-75» խորագրի տակ տեղադրված. «Գերմանացի լրագրողը մեղադրում է ԽՍՀՄ-ին Բեռլինը գրավելու առումով դաշնակիցներին խաբելու մեջ»: Այստեղ գերմանական լրագրող Սվեն Ֆելիքս Կյերլոֆը գրում է. «...Կարմիր բանակին «առանց դժվարության» հաջողվել է մոտենալ Բեռլինին և ջախջախիչ հարված հասցնել երրորդ Ռեյխին շնորհիվ այն ապատեղեկատվության, որ Մոսկվան հաղորդել է Վաշինգտոնին և Լոնդոնին: Հոդվածագիրը շարունակում է, որ 1945թ. մարտին արևմտյան դաշնակիցների զորքերի գլխավոր հրամանատար Դվայթ Էյզենհաուերը հեռագիր է ուղարկել գեներալիսիմուս Իոսիֆ Ստալինին, որում տեղեկացրել է, որ իրենց ստորաբաժանումները նախատեսում են հարավային ուղղությամբ բեկում իրականացնել «Ալպյան ամրոցում» գերմանական դիմադրության համախմբումը կանխելու նպատակով: Բեռլինի մասին անգամ չի նշվել այդ հեռագրում:

Ստալինը ի պատասխան գրել է, որ Գերմանիայի մայրաքաղաքը «կորցրել է իր նախկին ռազմավարական նշանակությունը, և խորհրդային գերագույն հրամանատարությունը նախատեսում է այնտեղ ուղարկել միայն երկրորդ կարգի զորքեր»: «Այնուամենայնիվ,- գրում է լրագրողը,- Ստալինը հրամայեց «կատարելապես զինված էլիտար զորքերը» դուրս բերել Բեռլինի համար մղվելիք ճակատամարտի համար, որի մասին էյզենհաուերը երբեք չէր կռահի»: «Եվրոպայում Միացյալ Նահանգների առավել մարտունակ մասերը կարող էին Բեռլին հասնել երկու ուղղություններով, բայց Մոսկվայից ապատեղեկատվությունը թույլ չի տվել դաշնակիցներին դա անել»,- բողոքում է գերմանացի լրագրողը:

«Հետախուզական կեղծ տեղեկությունները, վախը երևակայական վտանգի մասին և կեղծ լուրեր տարածելու մամուլի մղումներն արեցին իրենց սև գործը: Կարմիր բանակը գրավեց Բեռլինը՝ հիմք դնելով սառը պատերազմին»,- ամփոփում է գերմանացի լրագրողը: Այս լրագրողին Մեծ հաղթանակի 75-ամյակի նախօրեին լրացնում էին արևմտյան մի շարք լրագրողներ, որոնք փորձում էին նսեմացնել Կարմիր բանակի դերն ու արժանիքները Եվրոպան ֆաշիզմից ազատագրելու գործում: Ցավալի է, որ նույնիսկ հայ լրագրողների մեջ էլ կան նմաններ, որոնք նույնպես բողոքում են՝ նշելով, որ Հայրենական պատերազմի ժամանակ հաճախ կեղծվել են վիճակագրական տվյալներ, մեծացվել հակառակորդի կորուստները, նվազեցվել մերը: Այսպես, օրագրիս կցված է Մեծ հաղթանակի 45-րդ տարեդարձի վերաբերյալ «Հաղթանակի գինը» վերտառությամբ Հայկ Հայրապետյանի հոդվածը («Գրական թերթ», 4 մայիսի, 1990թ.), որում ընթերցում ենք. «Եվ ժամանակը չէ՞ միթե բացահայտորեն խոստովանել, որ պատերազմում եղել են ոչ միայն անխուսափելի, այլև անտեղի զոհեր: Գերմանացիները Բեռլինից Մոսկվա հասան 4 ամսից էլ պակաս ժամանակում, իսկ մենք Մոսկվայից Բեռլին հասանք 4 տարում: Բայց մի՞թե մեր զինվորներն ավելի վատ էին կռվում: Մի՞թե նրանք պակաս քաջ էին: Ոչ, բանը դա չէ: Պարզապես գերմանացիք իրենց հետևից թողնում էին լավորակ կաշվից կարած սապոգների և կրուպյան պողպատից ձուլված տանկային թրթուրների հետքեր, թանկարժեք շոկոլադի փաթեթներ, իսկ Կերչի թերակղզում Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիայի մարտիկը հրացանի, այն էլ՝ 1897թ. տիպի երեք գծանի հրացանի տեր էր դառնում իր պես մեկի զոհվելուց հետո...»: Իսկ եթե այդքանը մեր ժողովուրդն իմանար, կարո՞ղ էր իր առաջ դրված խնդիրը լուծել: Հոդվածագիրը տեղյակ չէ, որ գերմանական 5,5 միլիոնանոց զորքը լրիվությամբ լավորակ տեխնիկայի վրա էր: Իսկ ԽՍՀՄ-ը ընդամենն ուներ 8000 ավտոմեքենա, և Կարմիր բանակի մարտիկը հարյուրավոր, նույնիսկ հազարավոր կիլոմետրեր անցնում էր ոտով ու իր հետևին թողնում ոտաբոբիկ ոտքերի հետքեր: Հայրս այդ դիվիզիայի մարտիկներից էր ու ցավով հիշում էր, որ գերմանացիներից առգրաված ավտոմեքենայի լեզուն ոչ ոք չէր հասկանում, նույնիսկ մեր սպաներից շատերը չէին տիրապետում ավտոմեքենա վարելու մասնագիտությանը, իսկ պատերազմի տարիներին մեր գործարանները հարյուր-հազարավոր ավտոմեքենաներ թողարկեցին: Մեր բանակը ստացավ 103 հազ. տանկ, 134 հազ. ինքնաթիռ, 825 հազ. թնդանոթ և այլն: Ու երբ գերմանական բանակը (5,5 մլն-ոց բանակը) 4300 տանկով, 5 հազ. մարտական ինքնաթիռով և 97 հազարից ավելի հրանոթ-ականանետերով 4 ամսում հասավ Մոսկվային, բայց չկարողացավ մտնել, քանի որ ժողովրդի խնդրանքով Ստալինը ռիսկի էր դիմել, և արևելքից ավելի քան 700 հազարանոց բանակը զինված բերել Մոսկվա, իսկ 1945թ. ապրիլի 25-ին խորհրդային բանակը շրջապատեց Բեռլինը, որը պաշտպանվում էր 1 մլն-ից ավելի զինվորսպաների կողմից, 10 հազարից ավելի հրանոթ-ականներով, 1800 տանկով ու մոտ 3,5 հազար մարտական ինքնաթիռով, ոտքի է կանգնեցվել զենք բռնելու ունակ ամբողջ բնակչությունը, այդ թվում՝ 13-14 տարեկան դեռահասներ: Իսկ Բեռլինը շրջապատած մարշալներ Ժուկովը, Կոնևը և Ռոկոսովսկին արդեն ունեին 2,5 մլն զինվոր ու սպա, 41 հազ. հրանոթ և ականանետ, 6750 տանկ, 7500 մարտական ինքնաթիռ: Դրանց գումարած, երբ այդ ուժերը գիշերը հարձակման անցան, այդ նույն ժամանակ բռնկվեցին շուրջ 140 լուսարձակներ՝ կուրացնելով թշնամուն: Ինչո՞ւ այսքանը լրագրողները չեն հիշատակում, այլ բարբաջում են. «Եթե վերցնենք «Պրավդա»-ի այն տարիների հավաքածուն և սովորական կոմպյուտերի բացակայության պայմաններում հաշվապահական պարզ հաշիվ անենք, պատերազմի հենց առաջին օրից հակառակորդի սպանված ու վիրավոր զինվորների ու սպաների թիվը գումարենք, կհամոզվենք, որ հիրավի, 1942թ. աշնանը, ավելի ստույգ՝ հոկտեմբերի 12-ին, պատերազմը կարելի էր համարել ավարտված, քանի որ հակառակորդն այլևս կռվող զինվոր չպիտի ունենար: Հոդվածագիրը կոկորդով մեկ բղավում է. «Կատարվել է համատարած կեղծիք»:

Կրկնում եմ, ի՞նչ կլիներ մեր վիճակը, եթե ճշմարիտ տեղեկատվություն տրվեր, որ պատերազմի հենց առաջին օրերին Մինսկի մոտ գերվել էր սովետական 320 հազ., իսկ Կիևի մոտ՝ 650 հազ. զինվոր ու սպա, այլ գաղտնի մնաց, իսկ Ստալինգրադի ճակատամարտում 330 հազարանոց հիտլերյան բանակի շրջապատման ու ջախջախման մասին հայտնելով՝ մեր ժողովրդի ոգին բարձրացվեց, իսկ Գերմանիայում սուգ հայտարարվեց:

Ո՛չ գերմանացի լրագրողը և ո՛չ էլ մեր լրագրողները տեղյակ չեն նույնիսկ Հիտլերի կարծքին, որը մինչև պատերազմն սկսվելը 1939թ. օգոստոսի 22-ին արտահայտել էր. «Պատերազմ սկսելու համար ես քարոզչական պատճառ կհրամցնեմ՝ լինի համոզիչ կամ ոչ: Հաղթողին չեն հարցնի՝ արդյո՞ք նա ճշմարտություն է ասել: Պատերազմը սկսելիս կամ վարելիս կարևոր է ոչ թե ճշմարտությունը, այլ՝ հաղթանակը»: Իսկ հայ լրագրողը հիշեցնում է պատերազմի օրերին Կրեմլից հնչած մեր կարգախոսը. «Եվ ուրեմն, մեզ պետք է հաղթանակ, միայն հաղթանակ: Մենք նրա գնի առաջ կանգ չենք առնի»: Եվ այսօր բղավում է՝ դե իսկ ի՞նչ գին վճարվեց Մեծ Հայրենականում, 2-րդ աշխարհամարտում մեր հաղթանակի դիմաց: Մեր ժողովուրդը քանի՞ կյանք զոհեց ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում: Մինչև օրս էլ չգիտենք, մինչև օրս էլ դժվարանում ենք հաշվել զոհերի թիվը՝ 20 միլիո՞ն, երեսո՞ւն, քառասո՞ւն, թե՞ ավելի: Ինձ հայտնի են մամուլում հրապարակված թվերը. պատերազմի տարիներին մեր մոտավոր կորուստները հաշվվում են 26-27 մլն, անուղղակի կորուստները՝ 22-23 մլն: Ուրեմն՝ 48-50 մլն կյանք. սա է հաղթանակի գինը»,- ասում են լրագրողները: Իսկ այսօր դասագրքերում հանդիպում ենք 54 մլն-ի, աշխարհի կորուստները՝ ավելի քան 70 մլն և այլն: Նույնը և մեր՝ հայերիս կողմից զոհվածների թիվը՝ 150 հազ., 200, 250, 300, 350 հազ., թե ավելի: Այո, ավելի: 1995 թվականից գիտեմ, որ հայ ժողովուրդը հաղթանակի համար տվել է 367 հազ. զոհ, այսինքն՝ ավելի, քան ԱՄՆ-ը և Իտալիան տվել են ամբողջ պատերազմի ընթացքում միասին վերցրած, կամ 5 հազարով ավելի, քան ԽՍՀՄ-ը Բեռլինը գրավելու ժամանակ է տվել (362 հազ.): Բայց միևնույն է, հաղթանակից 75 տարի է անցել, դեռևս ճշգրիտ թվեր չեն տրվում, և համոզված եմ, որ նոր դասագրքերում նոր թվեր կտրվեն: Նույնը և վերաբերում է հերոսների քանակին: Հենց հայ հերոսների, որ 1985թ. դասագրքերում նշված է 90, հետագա դասագրքերում՝ 96, 100, 103. 104, 106 և վերջապես՝ 108: Էլ չեմ նշում ղարաբաղցի հերոսների քանակի մասին, որը մինչև օրս ճշտված չէ: Նույնիսկ 1990-ական թթ. պատմագրության մեջ հանդիպել եմ, որ Մեծ Հայրենականից առաջ ԽՍՀՄ-ում կային 600 հերոսներ, որոնցից երկուսը՝ ԼՂԻՄ-ից: Պատերազմի վերջի տվյալներով համապատասխանաբար՝ 11500 և 21: Մինչդեռ ես 70-ական թթ. Ստեփանակերտի ՊՏՈՒ-21-ում աշխատելիս սովորողների գիտակցությանն էի հասցնում. որ Մեծ Հայրենականից առաջ Սովետական Միության 600 հերոսներից 4-ը հայեր էին, մեկը՝ Հայաստանից, իսկ երեքը՝ Լեռնային Ղարաբաղից: Չգիտես ինչու, այսօր Հայոց պատմություն-11, էջ 20-ում անորոշ է գրված. «Հայերից 4-ին հերոսի կոչում է շնորհվել 1939-40 թթ. խորհրդա-ֆինական պատերազմում: 2-րդ համաշխարհային պատերազմում առաջին հայ հերոսը տանկիստ շարքային Կարապետ Սիմոնյանն է, որն այդ կոչմանն արժանացել է 1940թ. հունվարի 15-ին, բայց երեք ղարաբաղցիների մասին լռում են:

Իսկ դրանք մեծատառով մարդիկ են: Առաջին հայ գեներալը, որ արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման, Միխայիլ Արտեմի Պարսեղովն է, որ այդ կոչմանն արժանացել է 1940թ. մարտի 21-ին՝ միևնույն ժամանակ ստանալով գեներալ-լեյտենանտի զինվորական աստիճան (ԼՂԻՄ Մարտունու շրջան, Կոլխոզաշեն): Իսկ Իսահակ Մարկոսի Մանասյանը (գյուղ Խերխան) և Գրիգոր Միքայելի Հայրապետյանը (Մարտակերտի շրջան, Մինգրելսկ) հերոսի կոչման են արժանացել միաժամանակ նույն հրամանով՝ 1940թ. ապրիլի 7-ին:

Այնպես որ, այսօրվա երիտասարդը պետք է գիտականորեն համոզվի, որ Երկրորդ աշխարհամարտում և նրա հիմնական փուլ հանդիսացող Հայրենական պատերազմին 671 հազ. հայ և ավելի քան 70 հայ գեներալներ են մասնակցել, որպեսզի երկրագունդը փրկեն ֆաշիզմից: Իսկ Առաջին աշխարհամարտին մասնակցել է 600 հազ. հայ՝ ավելի քան 60 գեներալներով, հույս ունենալով պարտության մատնել Թուրքիային և ազատագրել Արևմտյան Հայաստանը: Սակայն այդ հույսը հօդս ցնդեց 1920թ. օգոստոսի 10-ին մեռած Սևրի պայմանագրով: Բայց ունեցավ ավելի քան 2 միլիոն զոհ ցեղասպանության պատճառով:

Երկրորդ աշխարհամարտում հայերը, 367 հազ. զոհ տալով, հույսը դրել էին հաղթանակի արդյունքի վրա, որ Մոսկվան Թուրքիայից համապատասխան տարածք կպահանջի, և կարծես այդ հույսն իրականանում էր: 1945թ. հունիսին ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմ Վ.Մոլոտովը Թուրքիայի դեսպանին ներկայացրեց ԽՍՀՄ տարածքային պահանջները: Հայ ժողովուրդը, այդ իմանալով, հանգիստ շունչ քաշեց ու սպասեց հարցի դրական լուծմանը: Բայց Թուրքիան իր գործը յուրովի տեսավ. դիմեց նախ Մեծ Բրիտանիայի, ապա՝ ԱՄՆ ղեկավարների օգնությանը:

☞4

ՆՈՐ ՈՒՍՏԱՐՎԱՆ ԸՆԴԱՌԱՋ

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Օգոստոսի 21-ին Բերձորում՝ շրջվարչակազմի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Քաշաթաղի շրջանի հանրակրթական դպրոցների և մանկապարտեզ-նախակրթարանների տնօրենների խորհրդակցություն: Շրջանում գործում է 52 հանրակրթական դպրոց և 4 մանկապարտեզ, որից Քարեգահինը՝ բարեգործական ծրագրով: Խորհրդակցությունը վարում էին շրջվարչակազմի ղեկավար Արտյոմ Սարիբեկյանն ու աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանը: Ներկա էին վարչակազմի ղեկավարի կրթության ու մշակույթի գծով տեղակալ Գևորգ Մնացականյանը և «Քաշաթաղի ջրամատակարարում» ՓԲԸ տնօրեն Սուրեն Աբրահամյանը: Հաշվի առնելով Նոր կորոնավիրուսի տարածումը կանխարգելելը՝ խորհրդակցությունն անցկացվեց երկու մասով: Սկզբում մասնակցեցին շրջանի հարավային թևի, այնուհետև՝ հյուսիսային թևի դպրոցների տնօրենները: Շրջվարչակազմի ղեկավարի առաջին հանդիպումն էր կրթական ոլորտի ներկայացուցիչների հետ:

Վ. Մովսիսյանը ողջունեց ներկաներին, շնորհավորեց Ա. Սարիբեկյանին՝ շրջվարչակազմի ղեկավար և Քարեգահի միջնակարգ դպրոցի նախկին տնօրեն Գևորգ Մնացականյանին վարչակազմի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակվելու առթիվ:

Շրջվարչակազմի ղեկավար Ա. Սարիբեկյանն իր ողջույնի խոսքում շնորհավորեց կրթական ոլորտի պատասխանատուներին նոր ուսումնական տարին սկսվելու կապակցությամբ, մաղթեց բարի երթ: Դասընթացները դպրոցներում կսկսվեն սեպտեմբերի 14-ից, սակայն մինչ այդ պետք է հնարավորինս աշխատանքներ տարվեն, որ պահպանվի Նոր կորոնավիրուսի տարածումը կանխարգելող կանոնակարգը: Այդ նպատակով դպրոցներին կհատկացվեն հատուկ ջերմաչափ, դիմակներ և ախտահանող պարագաներ: Այնուհետև Ա. Սարիբեկյանը հետաքրքրվեց դպրոցական շենքերի վիճակով: Հատկապես կարևորեց, որ բոլոր դպրոցներն ապահովվեն խմելու ջրով: Շրջանի դպրոցների մեծ մասը խմելու ջուր չունի: Քննարկվեցին լուծման տարբերակներ: Ա. Սարիբեկյանը հանձնարարեց «Քաշաթաղի ջրամատակարարում» ՓԲԸ տնօրեն Սուրեն Աբրահամյանին՝ աշխատել տնօրենների, համայնքների

ղեկավարների հետ և մինչ դասընթացներն սկսելը լուծում տալ խնդրին: Անդրադարձ եղավ նաև դպրոցական շենքերի նորոգմանը: Ա. Սարիբեկյանը տեղեկացրեց, որ նախատեսված է 2021թ. սկսել Տիգրանավանի Պետրոս Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցի շենքի հիմնանորոգումը: Կնորոգվեն նաև Դրախտածորի և Արվականի դպրոցների շենքերը: Արաքսամերձ Միջնավան քաղաքի Գալինա Ստարովոյտովայի անվան միջնակարգ դպրոցի շենքը վերջին տարիներին հիմնանորոգվել է, սակայն, կապված սանհանգույցի հետ, կան խնդիրներ: Իսկ հյուսիսային թևի Շալուայի գյուղական համայնքի դպրոցաշենքում կկատարվի դասասենյակների նորոգում: Կա նաև դպրոցի տարածքի ցանկապատման խնդիր: Տնօրենի տեղեկացմամբ ունեն ցանց, հարկավոր են միայն ծողասյուներ: Շրջվարչակազմի ղեկավարը նշեց, որ բոլոր խնդիրները, հատկապես՝ խմելու ջրի, սանհանգույցների, էլեկտրական հոսանքի, ժամանակի ընթացքում կլուծվեն: Միաժամանակ հորդորեց և պահանջեց, որ դպրոցներում պահպանվեն ԱՀ պարետի որոշումները, որպեսզի խուսափենք համավարակից, առողջ պահենք մեր երեխաներին:

Շրջանի Աղավնոյի Գարեգին Նժդեհի անվան, Ծիծեռնավանքի Վարագ Առաքելյանի անվան, Տանձուտի Ադամ Սահակյանի անվան և այլ դպրոցներում կան ուսուցիչներ, որոնք Սյունիքի մարզի բնակավայրերից են գալիս: Պահանջվեց, որ նույն ուսուցիչները մինչ համավարակի վերացումը բնակվեն և աշխատեն տեղում: Քննարկվեցին նոր ուստարվա հետ կապված մի շարք այլ հարցեր ևս:

Կրթության և սպորտի բաժնի վարիչն անդրադարձավ կրթական խնդիրներին: Տեղեկացրեց, որ սեպտեմբերի 4-ին տեղի կունենա խորհրդակցություն, որին ներկա է լինելու ԱՀ կրթության, գիտության և մշակույթի նախարարը: Անդրադարձավ ուսուցիչների թափուր տեղերի մրցույթի կանոնակարգին՝ տեղեկացնելով, որ մրցույթը տեղի կունենա օգոստոսի 25-ին: Հանձնարարեց, որ տնօրենները տեղեկանք ներկայացնեն աշակերտների թվի մասին: Եղավ անդրադարձ ոչ մասնագետ և համատեղությամբ աշխատող ուսուցիչների, դասաբաշխման, դասալսումների և այլ հարցերի վերաբերյալ: Վ. Մովսիսյանը տնօրեններին հորդորեց նոր ուստարին սկսել պատշաճ, հատկապես պահպանելով ԱՀ պարետի որոշումները:

Ջոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ՄԱԿ-Ը ՊԱՐՏԱՎՈՐ Է 21-ՐԴ ԴԱՐԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԴԱՐ ԴԱՐՁՆԵԼ

Եվ երբ երեք մեծ տերությունների ղեկավարները 1945թ. Պոտսդամի կոնֆերանսի հուլիսի 22-ի 23 նիստերում քննարկեցին հայկական տարածքների վերադարձման հարցը, որ առաջ էր քաշվել Ստալինի կողմից Մոլոտովի շուրթերով, Չերչիլը մերժեց Կովկասում որևէ սահմանային փոփոխություն, իսկ Տրումենը հայտարարեց, թե այդ հարցը Խորհրդային Միության և Թուրքիայի միջև լուծվելիք հարց է: Եվ ժողովուրդների «մեծ առաջնորդը», տեսնելով դա, զիջեց և հարցը հանեց քննարկումից: Իսկ 1953թ. մայիսի 30-ին էլ, Ստալինի մահից հետո ԽՍՀՄ կառավարությունը պաշտոնապես հայտարարեց. «ԽՍՀՄ-ը Թուրքիայից ոչ մի տարածքային պահանջ չունի»: Իսկ Ադրբեջանը, որ տասնյակ տարիներ բարբաջում էր, Երկրորդ աշխարհամարտին բանակ կանչեց 300 հազ. մարդ (ոչ թե ադրբեջանցի), 80-ական թվականներին այդ թիվը հասցրեց 600 հազարի, այնուհետև՝ 700 հազարի: Հետպատերազմյան տարիներին ամեն ինչ արեց Նախիջևանն ու Ղարաբաղը հայաթափելու և տարածքներին տիրանալու համար: Սուտ պատմություն հորինեց և աչքը դրեց ոչ միայն Երևանի, այլև ամբողջ Հայաստանի վրա: Արցախահայության ինքնորոշման արդար պահանջին Սումգայիթ-Բաքու-Կիրովաբադ և հայաշատ այլ շրջանների հայերի ջարդերով պատասխանեց ու չհայտարարված պատերազմ սկսեց, որ շարունակվում է ավելի քան 30 տարի: Նա մեծ եղբոր՝ Թուրքիայի պես չընդունեց, որ կատարել է հայերի ցեղասպանություն, ներողություն չխնդրեց:

Եթե ԳՖՀ առաջին կանցլեր Կոնդրատ Ադենհաուերը լինելով Երուսաղեմում՝ ծնկի է իջել այնտեղ գտնվող Լացի պատի առջև ու արտասվել, ներողություն խնդրել հրեա ժողովրդից գերմանացի ֆաշիստների մեղքերի համար, չի ջանացել արդարացնել հայրենակիցների դաժանությունները պատերազմական վիճակով, ապա այսօրվա թուրքերը, որ արդեն 83 միլիոնի են հասել, համարձակություն չունեն ճանաչել իրենց նախնիների կատարած ոճրագործությունը, նույնիսկ ժխտում են և հերոսացնում Ցեղասպանության կազմակերպիչներին: Նույն ճանապարհով գնում է Ադրբեջանը, որի ղեկավարները և՛ եղբայր թուրքերից են հայատյացությամբ ու դաժանությամբ տարբերվում, և՛ ֆաշիստներից: Նրանք չեն հագենում արյուն թափելուց. նավթային դոլարները փոխանակ օգտագործեն սեփական ժողովրդի բարեկեցության համար, միլիարդների արժեքով զենք են գնում՝ պատերազմ մղելու համար: Դաս չառնելով, որ 20-րդ դարը մարդկությանը սովորեցրեց իր ահավոր թվաբանությունը՝ մարդկային կյանքը հաշվել միլիոններով՝ ռազմաճակատներում զոհված միլիոնավոր մարդիկ: 21-րդ դարը նոր թվաբանություն սովորեցրեց՝ կորոնավիրուսով վարակվածների թիվը միլիոններով հաշվել:

Այսօրվա երիտասարդը տեսնում է, որ այն հզոր ԽՍՀՄ-ը չկա, ԽՍՀՄ, որ պատերազմի ողջ ծանրությունն իր ուսերին է տարել: Եվ թող ո՛չ գերմանացի և ո՛չ էլ արևմտյան երկրների ու ո՛չ էլ հայ որոշ լրագրողներ չփորձեն ցեխ շպրտել ԽՍՀՄ-ի և նրա Կարմիր բանակի երեսին և չուռճացնեն դաշնակիցների և լենդ-լիզով տված օգնությունը, որը կազմում է ԽՍՀՄ ծախսերի 4%-ը, այլ ականջներին օղ անեն ու հիշեն Ռուզվելտի անձնական ներկայացուցիչ Հ. Հոբկիսի՝ պատերազմի ավարտից անմիջապես հետո գրածը. «Մենք երբեք նկատի չենք ունեցել, որ լենդ-լիզով մեր օգնությունը Արևելյան ռազմաճակատում սովետական հաղթանակի գլխավոր գործոնն է: Այն ձեռք բերվեց ռուսական բանակի հերոսությամբ ու արյամբ»:

Ես իմ դասավանդման և պրոպագանդիստական գործունեության ժամանակ հպարտությամբ էի աշակերտներիս և ունկնդիրներիս գիտակցությանը հասցնում, որ Գերմանիան ամբողջ պատերազմի ընթացքում ունեցել է 1993,5 մարտական դիվիզիա, որից 895,5-ը՝ խորհրդա-գերմանական ճակատում, 155-ը՝ մյուս ճակատներում, 395-ը՝ օկուպացված տերիտորիաներում: Գլխավին ջախջախվել է 783 գերմանական դիվիզիա, որից 607-ը՝ խորհրդա-գերմանական ճակատում, 176-ը՝ դաշնակիցների կողմից; Եվ Մեծ հաղթանակի արդյունքն այն է, որ ուղիղ 75 տարի է՝ աշխարհը նոր համաշխարհային պատերազմ չի տեսել: Խորհրդային սերնդի հիշողությունից չի ջնջվում 27 միլիոն զոհերի, 2 միլիոն անհայտ կորածների թիվը, որ համակենտրոնացման ճամբարներում զոհվել է 4 մլն մարդ, որ միայն Լեհաստանում եղած գերմանական համակենտրոնացման ճամբարներում ոչնչացվել են 1,6 մլն խորհրդային գերիներ: Իսկ դրանց ընդհանուր թիվը արևմտյան գրականության մեջ հասնում է մինչև 6 միլիոնի:

Պատերազմի տարիներին դեպի Արևելք է էվակուացվել 25 մլն մարդ: Գրավված տարածքներում 8 մլն մարդ կամ բնակչության 40%-ը մնացել է սովի ու հալածանքների ծանր պայմաններում: 6 մլն մարդ, հիմնականում երիտասարդներ, քշվել են ֆաշիստական ստրկության: Ահա սա է 20-րդ դարի թվաբանությունը, և այսօր՝ 21-րդ դարում դա չպետք է կրկնվի:

Ուղիղ 75 տարի է, ինչ նոր աշխարհամարտ չի պայթել՝ շնորհիվ ԽՍՀՄ խաղաղասիրական քաղաքականության, շնորհիվ աշխարհի ժողովուրդների՝ խաղաղության պաշտպանության պայքարին ակտիվ մասնակցության, շնորհիվ ՄԱԿ-ի որոշ ազդեցության: Այդ 75 տարիներից 20-ը պատկանում է 21-րդ դարին, որը հաստատում է այն փաստը, որ հնարավոր է 21-րդ դարը խաղաղության դար դարձնել: Վատը միայն այն է, որ այսօր աշխարհի խաղաղությունը վտանգված է ադրբեջանա-թուրքական տանդեմով. աշխարհը գործ ունի Բաքվի ռազմատենչ իշխանությունների հետ, որոնք ավելի քան 30 տարի է, չհայտարարված պատերազմ են սանձազերծել ու լարված վիճակում են պահում տարածաշրջանը: Ագրեսիայի վարպետներ են դարձել, իրենք ագրեսիա են անում, բայց աշխարհով մեկ գոռում են, թե հայերն են ագրեսիա սկսել, ստորագրում են հրադադարի արձանագրություն, համաձայնություն են տալիս այս կամ այն բանակցությունում, բայց երբ հասնում են Բաքու, հրաժարվում են ստորագրությունից ու համաձայնությունից: Հարձակվում, կայծակնային պատերազմ են սկսում, դիվերսիաներ են կատարում, ջարդվում, բայց աշխարհով մեկ գոռում-գոչում, թե տեսեք՝ հայերն են սկսել կամ խախտել հրադադարը: Եվ այս օրերին, որ հուլիսի 12-ին հայկական սահմանում ռազմական լայն գործողություններ են սկսել ու հայկական սահմանային գյուղերին վնաս պատճառել, առանց ամաչելու ոտքի են հանել ադրբեջանական արհեստականորեն ստեղծված սփյուռքը և միջնադարյան կռիվներ սարքել աշխարհի խոշոր քաղաքներում՝ անհանգստացնելով տեղի բնակչությանը: Այնպես որ, համաշխարհային հանրությունը պետք է դատապարտի պատերազմ հրահրող կողմին, բռնի նրա թունավոր ձեռքը և թույլ չտա աշխարհը թունավորել նոր պատերազմով: 21-րդ դարը պետք է հայտարարվի խաղաղության դար, և հնարավո՛ր է, որ այն խաղաղության դար դարձվի:

Մաղլեն ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
Մշակույթի վաստակավոր գործիչ,
20-րդ դարի լավագույն մանկավարժ, անհատական թոշակառու

ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

ԱՍՏՂ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Ինչ-որ մեկն ինչ-որ ժամանակ հռչակավոր մարդկանց «աստղ» կոչեց՝ զուգահեռներ անցկացնելով միլիոն կիլոմետրերի հեռավորության վրա գտնվող երկնային մարմնի և շնորհաշատ հայտնիների միջև: Մենք՝ «աստղադիտարանում» նստածներս, կլանված հետևում ենք աստղերի շլացուցիչ սլացքին, մոլեռանդորեն երկրպագում նրանց, կուրորեն հավատում նրանց շուրջ հյուսվող լեգենդներին ու հաճախ հենց ինքներս էլ երևակայության վրձնով ամբողջացնում ենք աստղային կերպարը՝ այն հասցնելով կատարելության: Ահա թե ինչու աստղային պատվանդանին հայտնվելու թաքուն երազանքը յուրաքանչյուրիս գոնե մեկ անգամ այցելել է կյանքի որևէ հատվածում (նույնիսկ եթե քաջ գիտակցում էինք մեր շնորհազուրկ լինելը): Իսկ երբևէ մտածե՞լ եք, որ աստղ դառնալու համար պետք է ուսուցիչ դառնալ: Այն ընթերցողներին, ում դեմքին այս անսպասելի շրջադարձից քմծիծաղ հայտնվեց, թողնում եմ իրենց ծանր մտքերի հետ կռիվ տալու, իսկ ես զրույցս շարունակում եմ միայն նրանց հետ, ովքեր պատրաստ են համբերատար լսել:

Եվ այսպես, ասացեք խնդրեմ, ամեն երգող մարդ երգի՞չ է (այն էլ՝ աստղ), թե՞ ամենը, ով նկարահանվում է մասսայական տեսարանում, արդեն կինոաստղ է (այլ բան է, որ ոմանց՝ սահմաններ չճանաչող մեծամտությունը նրանց ինքնակոչ super star է դարձնում): Նույն կերպ էլ ամեն դաս տվող մարդ չէ, որ ուսուցիչ է, առավել ևս՝ աստղ ուսուցիչ: Առաջին հայացքից անհամատեղելի որոշիչ ու որոշյալ են «աստղն» ու «ուսուցիչը»: Բայց ամեն դպրոց իր աստղերն ունի, և զուր եք կարծում, թե աստղ կոչվելու համար պիտի համաշխարհային հռչակ վայելել: Բավական է միայն մարդու հուշերում թողնել անջնջելի ու լուսավոր հետք, հոգում՝ տաքուկ մի անկյուն: Իսկ թե էլ ինչպիսին պիտի լինել աստղ ուսուցիչ կոչվելու համար, վերջում կեզրահանգեք ինքներդ:

Բաժանումները կյանքում անխուսափելի են: Ու եթե մաթեմատիկայում բաժանումն ունի հստակ կանոններ, ապա կյանքում ամեն ինչի պես բաժանումը ևս հղի է վախեցնող անորոշությամբ: Այդպիսին է նաև հարկադիր բաժանումը սիրած գործից ու գործընկերներից թոշակի անցնելու կապակցությամբ: Երբեք դա որպես ցավալի փաստ չեմ ընդունել, քանի որ, ըստ իս, բարով-խերով թոշակի տարիքին հասնելն ինքնին մեծ բախտավորություն է: Դու գնում ես վաստակած հանգիստդ վայելելու, իսկ մարդիկ դրամատիկ տեսարաններով ու սրտաճմլիկ ելույթներով ստեղծում են թյուր տպավորություն, թե թոշակի անցնելը հավասարազոր է կյանքի լուսավոր պահերի վերջին տողի վերջակետին: Հենց այդ պատճառով էլ ես որոշեցի թոշակի անցնող իմ գործընկերուհու՝ մաթեմատիկայի ուսուցչուհի Մարիետա Մելքումյանի մասին գրել առանց պաթոսի, առանց ավելորդ հուզականության, գույները խտացնելու:

Այս հարցում ինձ օգնության եկան նրա սաները, որոնք սիրով համաձայնվեցին կիսվել սիրելի ուսուցչուհու մասին մտքերով: Մարիետա Մելքումյանի կերպարը ձեզ համար կբացահայտեն հենց նրանք՝ Խնապատի Արթուր Հայրապետյանի անվան դպրոցի սաները: Հատկանշական է մի փաստ. ում հարց տվեցի, էլ լռեցնել չկարողացա: Թվում էր՝ նրանք վաղուց էին սպասում նման հարցի: Ու սկսվում էր պատմությունների շարանը: Չէին գովերգում, այլ պարզապես պատմում էին սահուն ու պատկերավոր՝ նմանակելով ուսուցչուհու ժեստերը, միմիկան ու հնչերանգը, երբեմն նույնիսկ խոսելով ներկա ժամանակով՝ կարծես հենց րոպեներ առաջ են դուրս եկել մաթեմատիկայի դասից: Եթե ինքս չճանաչեի Մարիետա Մելքումյանին, տարակուսանքս ավելի մեծ կլիներ: Որտեղի՞ց այսքան վառ հիշողություններ սովորական ուսուցչի մասին, որտեղի՞ց խոսելու այսքան մեծ ցանկություն ու վարպետություն սովորական (նկատի ունեմ հանրային ելույթներին ոչ սովոր) մարդկանց մեջ: Ասածս ու գրի առածս իր ծավալով կբավականացներ մի քանի մասից բաղկացած վավերագրական ֆիլմի համար: Իմ առջև ծառացավ բարդ խնդիր. հնարավորինս հակիրճ ու ճշմարտացի ձեզ փոխանցել զրուցակիցներիս խոսքը:

Յուրա Գասպարյան *(1997-1998 ուստարվա շրջանավարտ, մասնագիտությամբ՝ ֆիզիկայի ուսուցիչ: Ներկայումս՝ ոստիկանության սպա).*

- Դասից տուն էի գնում ու առաջինը մաթեմատիկայի տնայինն էի գրում: Չկարծեք, թե դա վախից էր (չնայած ո՛վ չգիտի ընկեր Մելքումյանի ահարկու խստապահանջության մասին): Ընկեր Մելքումյանը գիտեր լսել ու չընդհատել, ճիշտ օրինակներ բերել մեզնից յուրաքանչյուրին հետաքրքրող ասպարեզից և կենցաղային իրավիճակներից ու հենց այդպես էլ հասանելի դարձնել թեման: Այդ պարզ օրինակների ընկալումը մեզ գյուտ էր թվում, ինչից ոգևորվում ու այդ ոգևորությամբ վարակում էինք միմյանց: Ահա թե ինչու տուն մտնելով՝ շտապում էի տնային աշխատանքը կատարել՝ կիրառելով սովորածս: Ներսս վառվող կրակը, որ ուսուցչուհուս նետած լուցկուց էր բռնկվել, պետք էր անպայման նպատակային սպառել:

Գոռ Գասպարյան *(Յուրայի որդին, 11-րդ դասարան).*

- Ես միշտ էլ զգում եմ, երբ ուսուցչի գործադրած ջանքերը միայն ու միայն մասնագիտական պարտականությունները հնարավորինս անթերի կատարելու ձգտումով են պայմանավորված: Ընկեր Մելքումյանի մոտ դա հակառակ պատկերն ունի: Երբեմն թվում է, թե դաս պատմելիս նա մոռանում է որտեղ է գտնվում և ում հետ է խոսում: Կարևորը, որ դիմացինի ուղեղի կայանը վերջնական արդյունքում ընդունի իր ուղարկած ազդակները:

Վրեժ Մելքումյան *(1986-1987 ուստարվա շրջանավարտ, տուն վերանորոգող վարպետ, ներկայումս՝ «Օհանյան Բրենդի» ընկերության աշխատող).*

- Առաջին զուգորդությունը, որն իմ մեջ առաջ է բերում մաթեմատիկայի ուսուցչիս անունը, դասարանում տիրող կարգ ու կանոնն ու պահանջկոտությունն են, ինչը, սակայն, զարմանալիորեն մեզ երբեք չէր կաշկանդում: Մեր միտքն ու հոգին մնում էին ազատ: Իսկ առաջին զգացողությունը, որն ունենում եմ ընկեր Մելքումյանի անունը լսելիս, ափսոսանքն է առ այն, որ ժամանակին լրջորեն չվերաբերվեցի ուսմանն ու բաց թողեցի նման հրաշալի մասնագետի տվածն իմը դարձնելու եզակի հնարավորությունը:

Անդրեյ Բաբայան *(2000-2001 ուստարվա շրջանավարտ, աշխարհագրագետ, քարտեզագրող: Ներկայումս՝ «ԱՀ գեոդեզիայի, քարտեզագրության, հողաշինարարության, անշարժ գույքի գնահատման կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն և տնօրենի պաշտոնակատար).*

- Երբ ինձ այս հարցով դիմեցիք, մտածում էի՝ ո՞ր մեկն ասեմ, ո՞րը թողնեմ: Ընկեր Մելքումյանի մանկավարժական վարպետությունն ու մարդկային որակները չափազանց ընդգրկուն են: Իմ վեցերորդցի որդու մաթեմատիկայի ուսուցիչն է նա հիմա: Երանի հնարավոր լիներ, որ նա իմ որդուն դասավանդեր մինչև 12-րդ դասարան: Կարծում եմ՝ սրանով ամեն ինչ ասված է:

Արմինե Մեժլումյան *(1993-1994 ուստարվա շրջանավարտ, կենսաբանության և ֆիզիկայի մասնագետ: Ներկայումս՝ Հադրութի շրջանի Դրախտիկ գյուղի մանկապարտեզի տնօրեն).*

- Երբ սովորում էի դպրոցում, հումանիտար բնագավառում ակնհայտ ունակություններս ոչ մի կասկած չէին թողնում. ես պատմաբան կամ լեզվաբան պիտի դառնայի: Ընկեր Մելքումյանը փոխեց իմ կյանքի ուղին: Այո՛, նա այն ուսուցիչներից է, ովքեր անգամ պատմության ընթացքը կարող են փոխել: Չէի ասի, որ մաթեմատիկան ինձ հեշտությամբ տրվեց, բայց ուսուցիչս թևերս չկտրեց: Ընկեր Մելքումյանի ներկայությունը քանդում է այն բոլոր կապանքներդ ու կաղապարներդ, որոնք ծնունդ են առնում «չեմ կարողանում»-ից: Արդյունքն առավել քան գերազանց էր: Ժամանակին ես դասավանդել եմ և՛ մաթեմատիկա, և՛ քիմիա, և՛ կենսաբանություն: Իսկ այսօր արդեն ֆիզիկայի մագիստրոսի կոչում ունեմ: Մի՞թե այս ամենին կարող էի հասնել առանց գիտությունների բանալի մաթեմատիկայի: Իսկ երբ դաս եմ բացատրում, հաճախ եմ ինձ բռնացնում «մելքումյանական» դրսևորումների մեջ:

Սվետլանա Բեգլարյան *(1990-1991 ուստարվա շրջանավարտ: ԱՀ ֆինանսների նախարարության Ասկերանի տարածքային ստորաբաժանման գլխավոր ֆինանսիստ).*

- Իմ ականջներում դեռ ընկեր Մելքումյանի ձայնն է, որն արտիստիկ ելևէջում էր ճիշտ իր գծած հիպերբոլի պես: Մի՞թե հնարավոր էր չընկալել յուրահատուկ հումորով համեմված այդ խոսքը: Իսկ ինչպե՞ս էր նա մեզ մաքրասիրություն ու հայ աղջկան վայել հեզաբարո պահվածք քարոզում...

Իմ մասնագիտական կայացումը պայմանավորված է առաջին հերթին հենց ընկեր Մելքումյանի՝ բարձրակարգ մատուցած մաթեմատիկայով: Նրա շնորհիվ իմ մեջ մշակվեցին այնպիսի հատկանիշներ, որոնք առայսօր պահանջված են թե՛ աշխատանքում, թե՛ կենցաղում, թե՛ կյանքում առհասարակ. չափի զգացողություն, խնայելու ունակություն, կատարելիք գործողությանս հետևանքը քայլ առաջ կռահելու կարողություն: Ափսոսում եմ, որ բոլոր ասածներս գրի առնել հնարավոր չէ, բայց այս մեկն անպայման գրեք. «Ես աննկարագրելի հրճվանք եմ ապրում, երբ նայում եմ մաթեմատիկական խնդրի մեջ խորասուզված որդուս ու նրա մեջ արդեն իսկ տեսնում եմ Ձեր ձեռագիրը: Մի անգամ, երբ վշտացել էի իմ ուզած գնահատականը չստանալու համար, Դուք ասացիք, որ կարևորը գնահատականը չէ, իսկ կյանքը հետագայում ապացուցեց Ձեր ասածը: Ու հենց կյանքն էլ Ձեր սաների միջոցով նաև Ձե՛զ է տալիս Ձեր արժանի գնահատականը, իմ մե՛ծ ուսուցիչ»:

Քաջիկ Սարգսյան *(2012-2013 ուստարվա շրջանավարտ: Մասնագիտությամբ՝ տնտեսագետ: Ներկայումս՝ ՊԲ ենթասպա).*

- Հիշում եմ՝ այն ժամանակ «Բանակում» հեռուստասերիալն էր էկրաններին: Մեր բառապաշարում հայտնվեց սերիալում հաճախակի գործածվող «յախշի» (թուրքերեն՝ «լավ») բառը, որով հերոսները կոչում էին զինվորների շրջանում հարգանք վայելող հեղինակություններին: Չգիտեմ ում մտքով անցավ փակ գաղտնի քվեարկությամբ դասատուների «յախշի»-ին ընտրել: Գլխարկը քվեատուփ դարձրինք, տետրից պոկած թղթի պատառիկները՝ քվեաթերթիկ: Աշակերտական ձայների գերակշիռ մեծամասնությամբ հաղթած ընկեր Մելքումյանին թաքուն սկսեցինք «յախշի» կոչել, իսկ հետո այդ մասին իմացան նաև ուսուցիչները: Տարիների հեռվից մեր արածն ինձ երեխայություն է թվում, բայց այն, որ ընկեր Մելքումյանը մեզ համար անսասան հեղինակություն էր, ապացույց չպահանջող փաստ է: Իմ ամենասիրած ուսուցչուհին ֆենոմենալ մարդ է: Նրա շուրթերից նույնիսկ վիրավորական թվացող «էշու կլյոխ» արտահայտությունը հաճոյախոսության պես էր հնչում:

Մարգարիտա Սարգսյան *(Քաջիկի քույրը, 2018-2019 ուստարվա շրջանավարտ, Տեղեկատվական տեխնոլոգիաներ - 2-րդ կուրս).*

- Այդ մարդն իր մեջ հաջողությամբ համատեղում է չսովորածի համար գլխիդ «ամպրոպ ու կայծակ» թափելու և վայրկյաններ անց կայծակնահար գլուխդ շշված վիճակից իր անզուգական հումորով կրկին տարածաչափություն վերադարձնելու ունակությունները:

Նա այն ուսուցիչներից է, ովքեր չեն անջրպետվում աշակերտից ու թույլ են տալիս ճանաչել իրենց ուսուցչի կերպարից դուրս: Չեն խուսափում սովորեցնելուն զուգահեռ նաև սովորել: Ասենք՝ մեզնից սովորել նորագույն տեխնոլոգիաներից օգտվելու հնարները: Իսկ ի՞նչը կարող է աշակերտի համար լինել առավել հաճելի, քան ուսուցչի հետ տեղերով փոխվելը: Իմ դասղեկը սրտեր շահելու արվեստում մրցակցություն չունեցող ուսուցիչ է: Ու սա վաղուց մեր դպրոցում աքսիոմա է:

Քույր ու եղբայր Սարգսյանների հետ զրույցին ներկա նրանց տատիկը վստահեցնում է, որ Մարիետա Մելքումյանն արժանի է իր «աստղային համբավին»: Որքան էլ փորձես կառավարել զգացմունքներդ, անհնար է առանց հուզվելու լսել այն մորը, ով խոսում էր Արցախյան ազատամարտում նահատակված որդու անունից: Նրա որդին՝ Քաջիկ Արարատի Սարգսյանը, նույնպես աշակերտել է Մ. Մելքումյանին:

«Բոլոր դեռահասների պես Քաջիկն էլ էր սկսել հետևել արտաքինին: Մի օր էլ մազերին «Прелесть» էր փչել (այն ժամանակ հայտնի մազերի լաք կար): Ինչպե՞ս դա կարող էր վրիպել ընկեր Մելքումյանի սրատես աչքից, ինչպե՞ս նա կարող էր այդ պճնամոլությանը համարժեք դիպուկ գնահատական չտալ՝ սթափեցնելով «մեղավորին», որը հաստատ այլևս երբեք չէր էլ փորձի «լաքապատ քյաքյուլով» դպրոց ներկայանալ»,- ժպիտը երեսին՝ ջերմությամբ վերհիշում է տիկին Լյուդմիլան:

Ուսուցիչը կարողացել էր սաստել ու կարգի հրավիրել տղային հումորաշաղախ այնպիսի խոսքերով, որոնք բնավ չեն խոցել տղային:

Որդին չկա, բայց կա մոր հոգին ջերմացնող վերհուշը, որն ամեն անգամ արթնանում է մաթեմատիկայի ուսուցչի անունը տալիս:

Աշակերտը հաճախ չի տեսնում, որ ուսուցիչը ներս մտավ՝ դռան հետևում թողնելով իր անձնական խնդիրները: Հնչում է զանգը, ու դու դատապարտված ես անել հնարավոր ամեն բան, որպեսզի այսօրվա քո դասը ևս աշակերտի համար ավարտվի հաջորդ հանդիպման ակնկալիքով, ինչպես դա լինում է բեմ ելած դերասանի ու հանդիսատեսի դեպքում:

Ու դպրոցն էլ ճիշտ բեմի նման չի սիրում միջակություններ: Բայց նույնիսկ եթե դպրոցում դու անթերի ես աշխատում, միևնույն է, աստղային կարգավիճակ չես ստանա, քանի դեռ ինչ-որ մեկի գիշերային երկինքը չես զարդարել քո ցոլանքով:

Մարիետա Մելքումյան աստղի ցոլանքը դեռ շատ երկար կզարդարի Խնապատի դպրոցն ավարտած մարդկանց երկնակամարը, ուր էլ որ տանելու լինի նրանց ճակատագրի կանխանշած ուղին:

Մեդինա ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

ՍԵՓԱԿԱՆ ՓՈՐՁԻՑ

ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մենք բոլորս հանճարներ ենք, բայց եթե պետք է ձկան մասին դատենք նրա՝ ծառ բարձրանալու կարողությամբ, ապա նա ողջ կյանքը կապրի՝ իրեն ամենավերջին անհաջողակը համարելով:

Ալբերտ ԷՅՆՇՏԵՅՆ

Հասարակության զարգացումն ու առաջընթացը անհրաժեշտություն են ստեղծում ոչ միայն նոր մոտեցումների և հասկացությունների սահմանման, այլև հաճախ պարտադրում են վերանայել, նորացնել ու հարստացնել ձևակերպված ու փորձարկված տեսակետներն ու ընդհանրացումները:

Իրականում ոչ նոր, բայց անընդհատ նորացվող և կատարելագործվող հասկացություն և գործընթաց է տարբերակված ուսուցումը, առանց որի անհնար է պատկերացնել ժամանակակից դպրոցը, և որի խնդիրներն են.

- ապահովել խմբի բոլոր սովորողների ներգրավվածությունը ուսումնառության գործընթացում,
- ուշադիր լինել ոչ միայն հետ մնացող, այլև բարձր ընդունակություններ ունեցող, նաև ստեղծարար սովորողների նկատմամբ,
- դասավանդումն ու ուսուցումը դարձնել հնարավորինս հետաքրքիր և հեռանկարային:

Տարբերակված ուսուցումը մանկավարժական այն հասկացությունն է, հիմնաքարը, որի վրա կառուցվում են անհատի՝ ուսման նկատմամբ հետաքրքրությունն ու սովորելու շահադրդումը, որից էլ կախված են նրա հնարավորությունների բացահայտումն ու մասնագիտական կողմնորոշումը: Ճիշտ կազմակերպված տարբերակված ուսուցումը ապացուցում է, որ ուսումնառության նպատակը ոչ միայն որոշակի քանակով գիտելիքների ձեռքբերումն է, այլև ակտիվության, ստեղծագործականության և անհատական այլ որակների դրսևորումը:

Յուրաքանչյուր ուսուցչի արդյունավետ գործունեության նախապայմաններից են սովորողների անհատական կարիքների բացահայտումը և նրանց կարողություններին համապատասխան՝ տարբերակված ուսումնառության կազմակերպման հնարավորության դիտարկումը, որն էլ իր հերթին նպաստում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը և որակի ապահովմանը:

«Տարբերակման միջոցով են ուսուցիչները և դպրոցները հնարավորություն տալիս յուրաքանչյուր աշակերտի իրացնելու իր ամբողջ ներուժը»,- ասվում է Լ. Բիլզի և Վ. Բրուքսի «Տարբերակման կիրառումն ուսումնառության խթանման համար» հոդվածում:

Այս ամենը հիմք է տալիս ասելու, որ մեր ժամանակների ուսուցիչը պետք է ընկալի դասավանդման փիլիսոփայությունը, ժամանակի ռիթմը: Միաժամանակ նա պետք է լինի կառուցողական, այսինքն՝ կազմակերպի այնպիսի դասեր, որոնք կհամապատասխանեն սովորողների ակնկալիքներին, կբավարարեն նրանց ճանաչողական պահանջները և կբարձրացնեն շահադրդումն ու ակտիվությունը: Նման դասեր կազմակերպելու համար սահմանված պետք է լինի ընդհանուր վերջնարդյունք՝ բոլոր սովորողներին հասանելի, և առանձին անհատական վերջնարդյունքներ այն անհատների համար, ովքեր կարիք ունեն լրացուցիչ կամ օժանդակ առաջադրանքների. խոսքս ուսումնառության հատուկ կարիքներ ունեցող, նաև օժտված աշակերտների մասին է:

Հետևաբար, ուսումնառության գործընթացի հաջողության կարևոր նախապայման է ուսուցչի կողմից ուսումնական ծրագրերի, առաջադրանքների հարմարեցումը սովորողների սպասելիքներին ու կարիքներին: Հակառակ դեպքում ուսումնառության գործընթացը կդառնա տանջալի, անհետաքրքիր գործունեություն ու ժամանակի անիմաստ վատնում:

Ժամանակի պահանջ է հնարավորինս հետաքրքիր դարձնել դասավանդման գործընթացը: Որոշ ուսուցիչներ դրան հասնելու համար սահմանափակվում են՝ տուրք տալով բազմամեթոդային դասավանդմանը, մյուսները ձգտում են սահմանել կրթության հստակ նպատակներ և առաջնորդվել դրանցով, ուրիշները մտածում են հենվել սեփական փորձառությանը և մշակել անհատական մեթոդներ ու ռազմավարություններ, այսինքն՝ ուսուցումը կազմակերպել ըստ սովորողների կարողությունների և կարիքների:

«Անհատական-կողմնորոշող հիմնական կրթական համակարգը տարբերակված մոտեցումն է, որը թույլատրում է հաշվի առնել երեխայի անհատական առանձնահատկությունները և ստեղծել պայմաններ նրա պոտենցիալ հնարավորությունների զարգացման համար» (Рыжова В. А., 2003):

Տարբերակված ուսուցման արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր աշակերտի՝

- մտավոր պատրաստվածությունը,
- անհատական կարողունակությունները,
- ուսումնական գործընթացի նկատմամբ հետաքրքրությունները:

Կրթական համակարգի զարգացման պայմաններն ու պահանջները թերևս հնարավորություն և անհրաժեշտություն են առաջացնում իրականացնելու ուսուցման բազմաբնույթ տարբերակումներ **արտադպրոցական, ներդպրոցական,** նաև **ներդասարանային** մակարդակներում:

Արտադպրոցական ոլորտում իրականացվող տարբերակումը ենթադրում է տարբեր քոլեջների, այս կամ այն ոլորտի առարկաների թեքումով դպրոցների, միջին մասնագիտական և արհեստագործական ուսումնական հաստատությունների առկայությունը: Այսպիսի ուսումնական հաստատություններում հիմնականում կենտրոնանում են այն առարկաների ուսումնասիրության վրա, որոնց նկատմամբ հետաքրքրություններ են դրսևորում տվյալ հաստատության մեջ ընդգրկված համարյա բոլոր սովորողները:

Դեռևս մինչև ավագ դպրոցների ստեղծումը որոշ միջնակարգ դպրոցներում գործում էին բնագիտամաթեմատիկական և հումանիտար առարկաների խորացված ուսուցմամբ դասարաններ: Դրանք, ըստ էության, իրականացնում էին ներդպրոցական տարբերակված ուսուցում և առաջին հերթին լուծում էին վաղ տարիքում մասնագիտական կողմնորոշման խնդիրը: Նման տարբերակումներ նույն նպատակադրմամբ այժմ էլ շարունակում են իրականացվել տարբեր ուսումնական հաստատությունների ավագ դասարաններում:

Տարբերակված ուսուցման ամենալայն կիրառվող ձևը միջդասարանային տարբերակումն է ժամանակակից դպրոցի բոլոր օղակներում: Նման տարբերակման հաջողությունը պայմանավորված է ուսուցչի կողմից մեթոդների ճիշտ ընտրությամբ և համադրմամբ և ըստ այդմ՝ յուրաքանչյուր սովորողի թեկուզ փոքր առաջընթացով: Հետևաբար, միջդասարանային տարբերակում իրականացնելը մեծապես կախված է ուսուցչի վարպետությունից: Նա է, որ պետք է կարողանա ճիշտ որոշել յուրաքանչյուր աշակերտի կարողությունները և դրանք զարգացնելու սահմանները, նրա հետաքրքրություններն ու դրանք բավարարելու պայմանները:

Ուսուցման տարբերակում կիրառելու համար անհրաժեշտ է.

- պլանավորել յուրաքանչյուր սովորողի ուսումնառության ընթացքը և վերջնարդյունքը.
- ապահովել բոլոր սովորողների ներգրավվածությունը ուսումնական գործընթացում.
- հաշվի առնել ամբողջ խմբի և առանձին սովորողների կարիքները.
- կենտրոնացնել և ուղղորդել յուրաքանչյուր սովորողի կարողությունները.
- օժանդակել սովորողի հետաքրքրությունների բացահայտմանը:

Որպես ուսուցիչ գնահատում եմ մեթոդամանկավարժական գրականության ընդհանրացումներն ու ձևակերպումները, ժամանակակից հետազոտող մանկավարժների արժեքավոր փորձը, վկայությունները, բայց, այնուամենայնիվ, գտնում եմ, որ յուրաքանչյուր դասարանական միջավայր պահանջում է իր յուրօրինակ մոտեցումները և թելադրում կիրառելի մեթոդների օգտակարությունը:

Պլանավորելով դասարանում և դասարանից դուրս կատարելիք աշխատանքը՝ անհրաժեշտ է սահմանել այն միջին վերջնարդյունքը, որը նախատեսվում է ամբողջ խմբի համար, այնուհետև, ինչպես նշվեց, ընտրել, մշակել առաջադրանքներ ուսումնական հատուկ կարիք ունեցող սովորողների համար, ինչպես նաև՝ օժտված աշակերտների ներգրավվածությունը և հետաքրքրությունները բավարարելու նպատակով:

Աշակերտների ներգրավվածությունը կարևոր պայման է դասի արդյունավետությունը կանխորոշելու համար, իսկ ներգրավվածության ապահովման համար, ըստ էության, անհրաժեշտ հանգամանք է տարբերակումը: Քանի որ դրա շնորհիվ հնարավոր է դառնում յուրաքանչյուր աշակերտի անհատական կարիքների և պահանջների հայտորոշումը և հնարավորության սահմաններում բավարարումը, միաժամանակ նաև՝ ներգրավումը:

Ուսուցիչը պետք է իր սանի ճիշտ հայտորոշողը լինի և կարողանա նրա մտավոր զարգացմանը, հետաքրքրություններին ու նպատակներին համապատասխան կառուցողական դասավանդում կազմակերպել: Նա իր աշխատանքում նաև նախաձեռնող ու ստեղծարար պետք է լինի՝ անկախ նրանից, թե ինչ ձևով է կազմակերպում ուսումնառությունը և ինչպես է կատարում այն առաքելությունը, որի գլխավոր պատասխանատուն է: Ուսուցչի նախաձեռնողականությունն ու ստեղծարարությունը կարևոր նախապայմաններ են սովորողներին ըստ անհատական հետաքրքրությունների և կարողունակությունների տարբերակելու և ուսումնական գործընթացին ներգրավելու համար:

Ուսուցման տարբերակում յուրաքանչյուր առանձին դեպքում կիրառվում է այն չափով, որքանով որ թույլ են տալիս խմբի կազմն ու ուսումնառության արձանագրվող առաջընթացը: Կարևոր է դասարանային կայուն, կամեցողական, փոխադարձ վստահության վրա հիմնված մթնոլորտի ապահովումը, որից կախված է համատեղ և անհատական արդյունավետ աշխատանքը:

Տարբերակում կարելի է կազմակերպել.

- ըստ առաջադրանքի,
- ըստ ռեսուրսի,
- ըստ արդյունքի,
- ըստ օժանդակության:

Լինելով նույն տարիքին՝ դասարանական միևնույն խմբերում ընդգրկված սովորողներն ունենում են տարիքային նույն առանձնահատկությունները և պահանջները, սակայն նրանք նաև շատ տարբեր են իրենց նպատակներով, հետաքրքրություններով, կարիքներով, ուշադրությամբ, հիշողությամբ, կարողություններով, նախասիրություններով և ուսումնառության ոճերով: Հետևաբար, նպատակային և արդյունավետ ուսուցում ապահովելու համար հարկ է ուշադրության արժանացնել սովորողների առանձին ուսումնական կարիքներն ու նախասիրությունները, իմացության մակարդակը և ակտիվությունը, ինչպես նաև խառնվածքն ու բնավորությունը:

Առավել կիրառելի և նպատակահարմար եմ գտնում **ըստ առաջադրանքի տարբերակումը,** որը և՛ ժամանակատար չէ, և՛ կարելի է տարբեր մեթոդների համադրմամբ կիրարկել դասի բոլոր փուլերում.

- տարբերակված հարցադրումներ դասի առաջին փուլում.
- առաջադրանքների տարբերակումներ զույգերով կամ խմբային աշխատանքի ժամանակ գիտելիքների հայտորոշման կամ ամրապնդման փուլում.
- տարբերակում ըստ նյութի հասկացվածության և ըստ կարողունակությունների, տնային և նախագծային աշխատանքների հանձնարարման ժամանակ:

Դասի առաջին փուլում մտագրոհի համար նախատեսված «Պատասխանում են անվանակոչվածները» հարցադրումների մեթոդը, օրինակ, հնարավորություն է ընձեռում կիրառելու տարբերակում՝ ներգրավելով բոլոր աշակերտներին: Յուրաքանչյուր աշակերտի ուղղվում է այնպիսի հարց, որը համապատասխանում է նրա կարողունակություններին և միաժամանակ կարող է արձանագրել փոքր առաջընթաց տվյալ աշակերտի ձեռքբերումների նկատմամբ: Նման մոտեցումը հոգեբանորեն նախապատրաստում է սովորողին վստահել իր հաջողությանը, իր հնարավորություններին:

Այս հնարը կարելի է անվանել «Դրական տրամադրվածություն». այն բոլորին ներգրավելու և աշխատանքային մթնոլորտ ապահովելու անհրաժեշտ պայման է:

Դասի ընթացում տարբերակված առաջադրանքներ կարելի է հանձնարարել զույգերով կամ խմբային աշխատանքների ժամանակ: Ընդ որում, նման պարագայում տարբերակում կարելի է ներառել երկու ձևով.

- սովորողներին խմբերի կամ զույգերի բաժանել՝ հաշվի առնելով կարողությունները, ըստ այդմ, խմբերից յուրաքանչյուրին հանձնարարել իրենց համար հաղթահարելի, բայց և առաջ տանող առաջադրանք,
- տարբեր կարողությունների տեր սովորողներին ընդգրկել նույն խմբում՝ կանխատեսելով նրանց՝ միմյանց օգնելու հավանականությունը:

Աշխատանքի քննարկման ժամանակ հայտորոշիչ հարցադրումներով կարելի է պարզել յուրաքանչյուրի անհատական ձեռքբերումները, սեփական բացթողումները տեսնելու, դրանք լրացնելու հնարավորությունները, ուսումնառության նպատակների սահմանման կառուցողականությունը: Այս պարագայում նպատակահարմար է կիրառել ձևավորող գնահատում:

Դասի վերջին փուլում կամ թեմատիկ ամփոփման ժամանակ տարբերակում կարելի է կիրառել տնային կամ նախագծային առաջադրանք հանձնարարելիս: Տվյալ դեպքում հարմար է նախատեսել այնպիսի աշխատանք, որը միտված կլինի լրացնելու և զարգացնելու յուրաքանչյուրի անհատական ձեռքբերումները:

Ըստ ռեսուրսի տարբերակումը հարմար է կիրառել անհատական, ինքնուրույն կամ նախագծային աշխատանքների հանձնարարման ժամանակ. այս դեպքում տրամադրվում են համապատասխան նյութեր, աղբյուրներ, հղումներ հանձնարարված առաջադրանքը կատարելու համար՝ յուրաքանչյուրի անհատական կարողությունները հաշվի առնելով: Ընդ որում, նման տարբերակմամբ առաջադրանքներ նմանապես կարելի է հանձնարարել զույգերով կամ խմբային աշխատանքների ժամանակ:

Ստեղծարար մտքի զարգացում է կանխատեսում **տարբերակումն ըստ արդյունքի.** այս դեպքում սովորողները հնարավորություն են ունենում որոշելու առաջադրանքի կատարման և ներկայացման ձևը: Ստացվում են հանձնարարված նյութի դիտարկման բազմաբնույթ և բազմակողմանի տեսակետներ ու տարբերակներ, որոնք օժանդակում են դասի բազմազանությանը և սովորողների հետաքրքրությունների ընդլայնմանը: Միևնույն թեմայի վերաբերյալ սովորողները կարող են սարքել սահիկաշարեր, գծագրեր, ցուցապաստառներ, ռեֆերատներ, ալբոմներ և այլն: Նման դեպքում սովորողներից յուրաքանչյուրը ձգտում է առանձնահատուկ և յուրօրինակ լուծում տալ առաջադրանքին, և ապահովվում են սովորողների հետաքրքրվածությունն ու թեմայի ընկալման ու ներկայացման բազմազանությունը: Նման տարբերակման հիմքը սովորողի ստեղծարարությունն է, ուսումնառության ոճերի տարբերությունները:

Նպատակային և հաճախակի կիրառվող է նաև **տարբերակումն ըստ օժանդակության,** այսինքն՝ ուսուցչի (ընկերոջ) կողմից յուրաքանչյուր սովորող ստանում է որոշակի ցուցումներ առաջադրանքների կատարման համար: Եվ սովորողներից յուրաքանչյուրին ուսուցիչը (ուղղորդողը) աշխատանքի կատարման ընթացքում տրամադրում է այնքան օգնություն, օժանդակություն, որքան որ նրան անհրաժեշտ է առաջադրված խնդիրը լուծելու կամ տվյալ հասկացությունը սահմանելու համար:

Տարբերակված ուսուցումը կիրառելի է բոլոր ժամանակներում, առավել ևս՝ հիմա. այն ներառական կրթության հիմնաքարն է և առանցքը:

Նոր չափորոշիչներում, որոնք դեռևս վերամշակման, վերակազմման փուլում են, առանձնակի տեղ է հատկացվում ուսուցման տարբերակմանը: Իրոք, այն սովորողի հետաքրքրությունների, նրա կարողունակությունների բացահայտման, ինչպես նաև ստեղծագործականության դրսևորման հնարավորություններ է ընձեռում:

Տարբերակվածությունը կիրառելի և խրախուսելի է նաև հեռավար ուսուցման պարագայում: Այդ սկզբունքով կազմակերպված առցանց պարապմունքներն ապահովում են սովորողների ակտիվ մասնակցությունը, նպաստում նրանց նախաձեռնողականության, քննադատական մտածողության և ճանաչողական ակտիվության զարգացմանը, համագործակցելու, հանդուրժելու, եզրահանգումներ անելու և նման հմտությունների ձեռքբերմանը:

Հ. Գ.- Տարբերակված ուսուցման վերաբերյալ հետազոտական ծավալուն աշխատանք եմ ներկայացրել **Արարատյան բակալավրիատ** ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրի շրջանակում: Եվ շարունակաբար, որպես գործող ուսուցիչ, տարբերակումը մշտապես կիրառում եմ և այդ ուղղությամբ շարունակում հետազոտություններս: Եթե թեման հետաքրքրի իր հրատապությամբ ու նպատակայնությամբ, և անհրաժեշտություն լինի նաև գործնական կիրառությունների վերաբերյալ ծավալվելու, սիրով կարձագանքեմ ձեր առաջարկներին:

Մանուշ ԲԱԼԱՅԱՆ
Ստեփանակերտի Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի

ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՓԱՍՏԵՐ ՄԵԾ ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

ՄԻԽԱՅԻԼ ՎԱՍԻԼԵՎԻՉ ՕՍՏՐՈԳՐԱԴՍԿԻ

(1801-1862)

Օստրոգրադսկու ուսումնասիրությունների թեմաներն էին՝ մաթեմատիկական ֆիզիկան, վերլուծական և երկնային մեխանիկան ու մաթեմատիկայի հարակից այլ բաժիններ:

Մի անգամ հանրաճանաչ մաթեմատիկոսի մոտ ծագեց մաթեմատիկական գաղափար, երբ անցնում էր Պետերբուրգի փողոցներից մեկով: Նա սկսեց ծածկել բանաձևերով այն, ինչը համարում էր սև գրատախտակ: Հանկարծ գրատախտակը սկսեց հեռանալ նրանից: Պարզվեց, որ դա գրատախտակ չէ, այլ կառքի հետևի դուռը: Զարմացած մաթեմատիկոսը սկսեց բղավել կառապանին՝ վազելով կառքի հետևից: «Սպասի՛ր, ո՞ւր ես վռազում, շուտով ես կավարտեմ»:

ԷՎԿԼԻԴԵՍ

(325-265 մ.թ.ա.)

Էվկլիդեսը Ալեքսանդրյան դպրոցի առաջին մաթեմատիկոսն է: Նրա գլխավոր աշխատությունն է «Երկրաչափության սկզբունքները», որտեղ հեղինակը շարադրում է երկրաչափության հարթաչափությունը, տարածաչափությունը և թվերի տեսությունը:

Մի անգամ հանրաճանաչ հույն մաթեմատիկոս Էվկլիդեսին հարցրին.

- Դուք ո՞րը կնախընտրեիք, երկու ամբողջ խնձո՞րը, թե՞ չորս կես խնձորները:

- Իհարկե, չորս կես խնձորները:

- Բայց ինչո՞ւ, չէ՞ որ դրանք նույն քանակությունն են,- հարցրեց ուսուցիչը:

- Բոլորովին դա միևնույնը չէ,- պատասխանեց ապագա մաթեմատիկոսը: Ընտրելով երկու ամբողջ խնձորներ՝ ինչպե՞ս ես կարող եմ իմանալ՝ նրանք ներսում որդ ունե՞ն, թե՞ ոչ:

Իհարկե, ինչպես նաև ուրիշ մեծագույն մարդկանց մասին կան շատ լեգենդներ, նշենք նրանցից մեկը, որը շատ ուսուցողական է:

Եգիպտական թագավոր Պտղոմեոս 1-ը հարցրեց Էվկլիդեսին՝ գոյություն չունի՞ ավելի կարճ ճանապարհ երկրաչափությունը հասկանալու համար, քան այն, որ պարունակվում է «Սկզբունքներում»:

Էվկլիդեսը հպարտ պատասխանեց. «Երկրաչափությունում թագավորական ճանապարհներ չկան»:

ԻՍԱՀԱԿ ՆՅՈՒՏՈՆ

Հռչակավոր գիտնական Իսահակ Նյուտոնը 1688թ. ընտրվում է Հասարակության պալատի անդամ: Խորհրդարանի անիմաստ ելույթները չէին հետաքրքրում գիտնականին, և որպես կանոն, Նյուտոնը նստում էր լուռ:


(1647-1727)

Մի անգամ բուռն քննարկումների ժամանակ Նյուտոնը կանգնեց: Բոլորը հայացքներն ուղղեցին Նյուտոնի կողմը:

«Ես կխնդրեի փակել պատուհանը, այստեղ ուժեղ փչում է»,- ասաց նա: Դա Նյուտոնի միակ ելույթն էր խորհրդարանում:

1668թ. Նյուտոնին շնորհվեց մագիստրոսի կոչում, և մինչև 1701թ. ղեկավարում էր համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ամբիոնը:

Նյուտոնը 1687թ. հրատարակում է մեծածավալ աշխատություն՝ «Բնական փիլիսոփայության մաթեմատիկական սկզբունքը», որը պարունակում է դինամիկայի օրենքները, տիեզերական ձգողության օրենքը:

Դպրոցական ուսումնառության սկզբնական տարիներին Նյուտոնը համարվում էր միջակ ընդունակությունների տեր աշակերտ: Լավերի թվում հայտնվելուն նրան օգնեց հոգեկան վնասվածքը, որը նա ստացավ համադասարանցու ծեծից, որն ավելի բարձրահասակ և ուսման հարցում ավելի ուժեղ էր:

ՌԵՆԵ ԴԵԿԱՐՏ


(1596-1650)

Ֆրանսիացի մաթեմատիկոս և փիլիսոփա: Դեկարտի մաթեմատիկական հետազոտությունները սերտ կապված են փիլիսոփայության և ֆիզիկայի հետ: «Երկրաչափություն» աշխատությունում Դեկարտը առաջինը մուծեց «փոփոխական մեծություն» և «ֆունկցիա» հասկացությունները: Դեկարտը շարադրեց անալիտիկ երկրաչափության հիմունքները, մուծեց «ուժի իմպուլս» հասկացությունը, ձևակերպեց շարժման քանակի պահպանման օրենքը, ստեղծեց կոորդինատների մեթոդը (դեկարտյան կոորդինատներ):

Հայտնի են Դեկարտի օվալներ կորերը: Դեկարտը մուծեց «երկրաչափական գծեր» հասկացությունը, որոնք կարելի է նկարագրել ծխնիների մեխանիզմի շարժումով:

- Բոլոր մարդկանց մարդկային կրքերի գլխավոր գործունեությունը կայանում է նրանում, որ նրանք արթնացնում և ուղղում են մարդու հոգին ցանկանալ այն, ինչին այդ կրքերը նախապատրաստում են նրա մարմնին:
- Փիլիսոփայությունը, քանի որ տարածվում է մարդկային բոլոր թույլատրելի ճանաչողությունների վրա, միակն է, որը մեզ տարբերում է վայրենիներից և բարբարոսներից, և ամեն մի ժողովուրդ այնքանով է ժողովրդավարական և քաղաքակիրթ, որքանով նա լավ է փիլիսոփայում, այդ պատճառով պետության համար չկա ավելի մեծ առավելություն, քան ունենալ լավ փիլիսոփաներ:

ԿԱՐԼ ԳԱՈՒՍ

(1777-1855)

Արդեն երեք տարեկան հասակում Իոհան Կարլ Գաուսը այնքան լավ կարդալ և հաշվել գիտեր, որ կարողացավ գտնել հոր թույլ տված սխալը հաշվարկներում:

Գաուսին են վերագրում «Մաթեմատիկան գիտությունների թագուհին է, իսկ թվաբանությունը՝ մաթեմատիկայի թագուհին» արտահայտությունը:

Գոյություն ունի ևս մի պատմություն Գաուսի մանկության մասին: Նրա մայրը ստույգ չէր հիշում որդու ծննդյան օրը, բայց հիշում էր, որ դա տեղի է ունեցել Պահքից 8 օր առաջ: Իմանալով դա՝ տղան ստույգ հաշվարկեց իր ծննդյան օրը:

1791թ. կոմս Բրաունշվեյգը նկատում է Գաուսի հաջողությունները ուսման մեջ և իր վրա վերցնում նրա դպրոցական, իսկ հետագայում նաև՝ Գյետինգենի համալսարանական (1795-1798թթ.) ուսումնառության ծախսերը:

1792թ. երիտասարդ մաթեմատիկոսը հայտնագործեց կանոնավոր 17 անկյունանու կառուցման եղանակը կարկինի և քանոնի օգնությամբ:

1799թ. Գաուսն իր ատենախոսությունը ուղարկում է Հելմշտեդտի համալսարան «Հանրահաշվի հիմնական թեորեմի ապացույցը» վերնագրով, որի համար նա հեռակա կարգով ստանում է գիտությունների դոկտորի կոչում:

1801թ. Լագրանժը գրում է երիտասարդ գիտնականին. «Ձեր հետազոտությունները Ձեզ բարձրացրին մինչև առաջին մաթեմատիկոսների շարքը»: Այդ թվականին Գաուսը դառնում է Ռուսական ակադեմիայի թղթակից անդամ:

> Կանոնավոր բազմանկյան պատկերումը՝ տասնյոթ թևերով աստղի, որը տեղադրված է հեղինակի՝ Կարլ Գաուսի մահարձանի վրա, համաձայն նրա կտակի:



Գերմանացի մաթեմատիկոս, մեխանիկ, ֆիզիկոս և գեոդեզիստ Կ. Գաուսը համարվում է բոլոր ժամանակների մեծագույն մաթեմատիկոսը՝ «մաթեմատիկոսների արքան»:

Ռ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԱրՊՀ մաթեմատիկայի ամբիոնի դասախոս, մ.գ.թ., դոցենտ

ԿԱՐԳ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

17 օգոստոսի 2020 թվականի N 120-Ն

ք. Ստեփանակերտ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ (ԴԱՍՏԻԱՐԱԿԻ) ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N 167-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՍԱՍԻՆ

«Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետին և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել ուսումնական հաստատության ուսուցչի (դաստիարակի) թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի հուլիսի 19-ի «Ուսումնական հաստատության ուսուցչի (դաստիարակի) թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N 138-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 167-Ն հրամանը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:

Նախարար՝ Լ. ՂԱՐԱԽԱՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության
կրթության, գիտության և մշակույթի նախարարի
2020 թվականի օգոստոսի 17-ի N 120-Ն հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՐԳ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ (ԴԱՍՏԻԱՐԱԿԻ) ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են հանրակրթական պետական հիմնական և նախադպրոցական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության (այսուհետ՝ հաստատություն) ուսուցչի (դաստիարակի) թափուր տեղը (այսուհետ՝ թափուր տեղ) համալրելու մրցույթի (այսուհետ՝ մրցույթ) կազմակերպման և անցկացման հետ կապված գործատուի և մրցույթին մասնակցող անձի կամ անձերի (այսուհետ՝ մասնակից) միջև ծագող իրավահարաբերությունները:

2. Թափուր տեղ է համարվում մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկով և տվյալ հաստատության տարիֆավորման ցուցակով նախատեսված՝ ուսուցչի (դաստիարակի) չզբաղեցրած պաշտոնը:

3. Հաստատությունում մրցույթ հայտարարվում է, եթե տվյալ առարկան դասավանդող ռաուցիչ(ներ)ն ունի (ունեն) մեկ դրույք ծանրաբեռնվածություն, իսկ թափուր մնացած ժամաքանակը վեց և ավելի է: Նախադպրոցական հաստատությունում դաստիարակի մրցույթ հայտարարվում է առնվազն 0,5 հաստիք թափուր մնալու դեպքում:

4. Թափուր տեղ առաջանալու դեպքում հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն) դասաժամերը տրամադրում է նույն հաստատությունում տվյալ առարկան արդեն դասավանդող դրույքաչափը չլրացած ուսուցչին, կարող է տրամադրել նաև համատեղությամբ աշխատող, համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող մասնագետին:

5. Թափուր տեղ առաջանալու մասին տնօրենը տեղեկացնում է տարածքային լիազոր պետական մարմնին (շրջանի (Ստեփանակերտի քաղաքապետարան) վարչակազմի աշխատակազմի կրթության և մշակույթի բաժնին):

6. Մրցույթը հայտարարվում է թափուր տեղ առաջանալու օրվանից՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ բացառությամբ տվյալ ուսումնական տարվա մարտի 31-ից մինչև օգոստոսի 1-ը ընկած ժամանակահատվածում առաջացած թափուր տեղերի:

7. Առաջացած թափուր տեղի համար առաջին անգամ հայտարարված մրցույթը չկայանալու դեպքում հայտարարվում է մրցույթ 2-րդ անգամ:

8. 2-րդ անգամ մրցութային կարգով չհամալրված թափուր տեղում պայմանագրային հիմունքով աշխատանքի կարող է ընդունվել՝

1) համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող՝ տվյալ ուսումնական տարվա կտրվածքով տվյալ շրջանի մեկ այլ ուսումնական հաստատությունում մրցութային շեմը հաղթահարած, սակայն ըստ առաջնահերթության աշխատանք չստացած անձը,

2) համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող անձը,

3) դասաժամերը կարող են նաև համատեղությամբ տրամադրվել համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող մասնագետի:

9. Թափուր տեղը սահմանված կարգով չհամալրվելու և սույն կարգի 8-րդ կետի պայմանները չբավարարվելու դեպքում տարածքային լիազոր մարմնի ներկայացմամբ և Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարի (այսուհետ՝ նախարար) համաձայնությամբ մինչև ուսումնական պարապմունքների ավարտը կարող է աշխատանքի ընդունվել հարակից մասնագիտություն ունեցող անձը:

10. Հաստատությունում աշխատող, համապատասխան որակավորում ունեցող, սակայն տվյալ առարկան չդասավանդած կամ չդասավանդող մասնագետը թափուր տեղը կարող է զբաղեցնել մրցութային կարգով:

11. Հաստատությունում մրցույթ չի հայտարարվում, և թափուր տեղը զբաղեցվում է ոչ մրցութային կարգով, եթե՝

1) տեղը թափուր է ժամանակավորապես (աշխատողի՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու կամ հղիության, ծննդաբերության և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի, Արցախի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում),

2) առաջացած ժամերը տնօրինվել են սույն կարգի 4-րդ կետի համաձայն,

3) թափուր ժամերն առաջացել են 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում,

4) առկա է Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարության կողմից երաշխավորված՝ նպատակային ծրագրերով ուղեգրված մասնագիտական կրթություն ստացած կամ վերաորակավորված թեկնածու,

5) առկա է տփալ ուսումնական տարվա կտրվածքով տվյալ հաստատությունում մրցույթում հաղթող ճանաչված, բայց ըստ առաջնահերթությունների աշխատանք չստացած մասնակից,

6) թափուր ժամերն առաջացել են տվյալ ուսումնական տարվա մարտի 31-ից հետո:

12. Սույն կարգի 11-րդ կետով սահմանված դեպքերում աշխատողի հետ ըստ անհրաժեշտության կնքվում է որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր՝

1) 1-ին ենթակետով ժամանակավորապես առաջացած թափուր տեղի ժամանակահատվածով,

2) 4-րդ ենթակետով՝ ուղեգրման կամ նպատակային ծրագրերի ժամկետներով,

3) 5-րդ և 6-րդ ենթակետերով՝ մինչև ուսումնական պարապմունքների ավարտը, անհրաժեշտության դեպքում ընդգրկել նաև քննաշրջանը:

13. Մրցույթն անց է կացվում երկու փուլով՝ գրավոր և բանավոր: Յուրաքանչյուր փուլի համար Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարության կողմից մշակվում է հարցաշար (այսուհետ՝ հարցաշար)՝ 100 հարց գրավոր փուլի համար և 100 հարց զուտ առարկայական՝ մասնագիտական՝ բանավոր փուլի համար:

Մասնագիտական հարցերի մեջ կարող են լինել գործնական առաջադրանքներ, որոնք կազմվում են մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) կողմից՝ ըստ նախանշված թեմաների: Հարցաշարերը հաստատվում են նախարարի հրամանով և հրապարակվում Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարության **edu.nkr.am** պաշտոնական կայքէջում և **«Լուսարար»** պաշտոնաթերթում:

2. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

14. Թափուր տեղը համալրելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը տարածքային լիազոր մարմնի ներկայացմամբ Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարությունը հրապարակում է **«Լուսարար»** պաշտոնաթերթում, Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարության կայքէջում **(edu.nkr.am)** և Արցախի հանրային հեռուստատեսությամբ՝ մրցույթն անցկացնելուց առնվազն մեկ ամիս առաջ:

15. Հայտարարության տեքստում նշվում են՝

1) հաստատության անվանումը, վայրը,

2) թափուր տեղի անվանումը, շաբաթական ժամերի քանակը,

3) սույն կարգի 13-րդ կետով սահմանված մրցույթի անցկացման ձևերը և բովանդակությանը վերաբերող դրույթները,

4) սույն կարգի 19-րդ կետով սահմանված փաստաթղթերի ցանկը (բնօրինակները և պատճենները),

5) մրցույթի անցկացման օրը, ժամը, տեղը և փաստաթղթերի հանձնման վերջնաժամկետը:

16. Մրցույթին մասնակցելու մասին փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրից՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում:

17. Մրցույթի անցկացման օրը նշանակվում է փաստաթղթերի ընդունման ավարտից ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

3. ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

18. Մրցույթին կարող է մասնակցել հաստատության տվյալ թափուր տեղին ներկայացվող՝ «Հանրակրթության մասին» օրենքի 24-րդ հոդվածի և 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը:

19. Մրցույթին մասնակցելու համար մասնակիցը հաստատության տնօրենին է ներկայացնում՝

1) դիմում (Ձև 1),

2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3) անձը հաստատող փաստաթուղթ,

4) աշխատանքային գրքույկ,

5) ինքնակենսագրություն (Ձև 4),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,

7) այլ պետությունների քաղաքացիների՝ Արցախի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

8) Արցախի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինգրքույկ,

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

10) որակավորման տարակարգ (առկայության դեպքում):

20. Տնօրենը կամ նրա կողմից նշանակված պատասխանատու աշխատակիցը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, բնօրինակները վերադարձնում:

21. Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

3) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության կատարմանը: Այդ հիվանդությունների ցանկը հաստատում է Արցախի

ԿԱՐԳ

Հանրապետության կառավարությունը.

4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

4. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

22. Հանձնաժողովը ձևավորվում է մրցույթի անցկացմանը նախորդող աշխատանքային օրը, անվանական կազմը հաստատում է շրջանի շրջվարչակազմի, Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության և մշակույթի բաժնի վարիչը՝ այդ մասին տեղեկացնելով հանձնաժողովի անդամներին:

23. Հանձնաժողովը կազմված է հինգ անդամից՝

1) հանձնաժողովի նախագահը շրջանի շրջվարչակազմի, Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության և մշակույթի բաժնի վարիչն է (վարիչի պաշտոնակատարը) կամ բաժնի ներկայացուցիչը.

2) Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարության ներկայացուցիչը, տվյալ հաստատության տնօրենը (տնօրենի պաշտոնակատարը) կամ տնօրենի ուսումնական գծով տեղակալը, երկու ուսուցիչներ այլ հաստատություններից՝ համաձայնությամբ (տվյալ առարկայի դասավանդման առնվազն հինգ տարվա փորձ ունեցող):

24. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Քվորում չապահովելու դեպքում նիստը կարող է հետաձգվել երկու անգամ՝ մինչև երեք աշխատանքային օրով:

25. Հանձնաժողովի որոշումներն արձանագրվում են քարտուղարի կողմից (որը հանձնաժողովի անդամներից մեկն է) առանձին մատյանում և պահպանվում են տվյալ դպրոցում: Մատյանն ավարտվելուց հետո արխիվացվում է օրենքով սահմանված կարգով:

26. Մրցույթին մասնակցելու թույլտվություն չտալու դեպքում հանձնաժողովը հիմնավոր պատճառաբանությամբ մասնակցին գրավոր ներկայացնում է մերժման իրավական հիմքերը (իրավական ակտի անվանումը, դրույթը):

27. Եթե հանձնաժողովը մրցույթին մասնակցելու համար դիմած անձանցից ոչ մեկին չի թույլատրում մասնակցել մրցույթին, ապա հանձնաժողովի կողմից ընդունվում է մրցույթը չկայացած համարելու մասին որոշում, և սույն կարգի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարվում է մրցույթ 2-րդ անգամ:

5. ԳՐԱՎՈՐ ՍՏՈՒԳՄԱՆ ՓՈՒԼ

28. Մրցույթն անցկացվում է բացառապես նախարարի հրամանով հաստատված հարցաշարի հիման վրա:

29. Գրավոր փուլի համար հանձնաժողովը կազմում է թեստային առաջադրանք՝ բաղկացած հարցաշարի 100 հարցից և դրանց երեք ենթադրյալ պատասխաններից, որոնցից մեկը միանշանակ ճիշտ պատասխանն է, որը նշված է հարցաշարում:

30. Գրավոր փուլն անցկացվում է այդ նպատակի համար առանձնացված սենյակում:

31. Մասնակիցը թեստավորմանը մասնակցելու համար ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ: Հանձնաժողովի քարտուղարը ստուգում է մասնակցի ինքնությունը և թույլատրում նրան մուտք գործել թեստավորման անցկացման սենյակ: Մասնակցի մուտքը սենյակ դադարեցվում է թեստավորումն սկսելուց տասը րոպե առաջ:

32. Մասնակցին արգելվում է իր հետ սենյակ ներս բերել կապի միջոցներ, տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութեր կամ այլ տեխնիկական սարքեր:

33. Հանձնաժողովի քարտուղարը մասնակիցներին բացատրում է թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը, պատասխանում է մասնակիցների մրցույթի անցկացմանը վերաբերող հարցերին, ինչպես նաև տեղեկացնում է բանավոր փուլի անցկացման ժամի մասին:

34. Հանձնաժողովի քարտուղարը մասնակիցների թվաքանակով պատճենահանված թեստային առաջադրանքը բաժանում է մասնակիցներին (ոչ մի դեպքում մեկ այլ թեստային առաջադրանք չի տրվում), մասնակիցը թեստային առաջադրանքի վրա լրացնում է իր ազգանունը, անունը, հայրանունը և ստորագրում:

35. Թեստավորման սկիզբը հայտարարելուց հետո մասնակիցը ծանոթանում է առաջադրանքին, յուրաքանչյուր առաջադրանքի համար ընտրում է մեկ պատասխան և դրա դիմաց կատարում է համապատասխան նշում: Աշխատանքն ավարտելուց հետո առաջադրանքը հանձնում է հանձնաժողովի քարտուղարին:

36. Թեստավորման ընթացքում մասնակցին չի թույլատրվում աղմկել, հուշել, խոսել, հարցեր տալ ներկա գտնվող անձանց, այդ թվում՝ հանձնաժողովի անդամներին, ինչպես նաև դուրս գալ սենյակից: Եթե մասնակիցը ցանկանում է լքել սենյակը, նրա աշխատանքը համարվում է ավարտված:

37. Գրավոր փուլի ավարտից 15 րոպե առաջ հանձնաժողովի քարտուղարի կողմից մասնակիցը տեղեկացվում է ժամանակի մասին:

38. Առաջադրանքի համար տրվում է 120 րոպե, յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, սխալ պատասխանը՝ զրո:

39. Գրավոր փուլի անցումային շեմ է համարվում առաջադրանքի 100 հարցի առնվազն 85 տոկոս ճիշտ պատասխանը:

40. Սխալ պատասխաններ են համարվում՝

1) ոչ ճիշտ պատասխան նշելը,

2) մեկից ավելի պատասխաններ նշելը,

3) ջնջումներ, ուղղումներ կամ վերականգնումներ կատարելը,

4) հարցի շարադրված պատասխաններից ոչ մեկում նշում չկատարելը:

41. Գրավոր փուլն ավարտվելուց հետո թեստային առաջադրանքների ստուգման համար տրվում է մեկ ժամ:

42. Ստուգված առաջադրանքի միավորի տակ ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները, իսկ անհամաձայնության դեպքում կցվում է հանձնաժողովի համապատասխան անդամի կարծիքը:

43. Հանձնաժողովի նախագահը բոլոր մասնակիցներին հրավիրում է քննասենյակ՝ գրավոր փուլի արդյունքները և մրցույթի բանավոր փուլ անցած մասնակիցների անունները հրապարակելու համար:

44. Գրավոր փուլի արդյունքները հրապարակելուց հետո անհամաձայնության դեպքում դրանք կարող են բողոքարկվել հանձնաժողովին մեկ ժամվա ընթացքում:

45. Բողոքարկման արդյունքում ընդունված որոշումը կարող է բողոքարկվել կրթության պետական կառավարման լիազոր մարմնին և (կամ) դատարան:

46. Ստուգված առաջադրանքների պատճենները ցանկության դեպքում կարող են տրամադրվել մասնակիցներին:

6. ԲԱՆԱՎՈՐ ՓՈՒԼԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

47. Հանձնաժողովի նախագահը մրցույթի բանավոր փուլ անցած բոլոր մասնակիցներին հրավիրում է քննասենյակ: Ցանկացողները կարող են մնալ քննասենյակում ու հետևել բանավոր փուլին՝ մինչև ավարտը: Բանավոր փուլի ժամանակ մասնակիցը վիճակահանությամբ բանավոր առաջադրանքների հարցաշարից ընտրում է ութ հարց:

48. Յուրաքանչյուր մասնակցի տրվում է մինչև 30 րոպե՝ բանավոր փուլին պատրաստվելու համար:

49. Մասնակցի կողմից հարցատոմսի հարցերի վերաբերյալ տրված պատասխանները գնահատվում են ճիշտ (երկու միավոր), թերի (մեկ միավոր) կամ սխալ (զրո միավոր) հանձնաժողովի մասնագետ անդամի կողմից:

50. Եթե մասնակցի տված պատասխանը գնահատվում է սխալ կամ թերի, ապա հանձնաժողովի՝ գնահատականը տվող անդամի կողմից պետք է հնչեցվի ճիշտ ու ամբողջական պատասխանը:

51. Մասնակիցը համարվում է բանավոր փուլի շեմը հաղթահարած, եթե ճիշտ ու ամբողջական է պատասխանել բանավոր ութ հարցից առնվազն վեցին:

52. Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն արձանագրվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից: Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցը հնարավորության դեպքում տեսաձայնագրվում է:

53. Արձանագրության մեջ ամրագրվում է յուրաքանչյուր հարցը, հարցի վերաբերյալ մասնակցի տված պատասխանը, հանձնաժողովի համապատասխան (նշելով նրա անունը և ազգանունը) անդամի գնահատականը (ճիշտ, թերի կամ սխալ), իսկ թերի ու սխալ պատասխանի դեպքում՝ հնչեցրած ճիշտ ու ամբողջական պատասխանը:

54. Արձանագրությունն ստորագրվում է հանձնաժողովի քարտուղարի, մասնակցի և հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

55. Յուրաքանչյուր մասնակցի համար հարցազրույցն ավարտելուց հետո լրացվում է անհատական թերթիկը (Ձև 3):

56. Հանձնաժողովի նախագահը բարձրաձայն բոլոր մասնակիցներին հայտարարում է բանավոր փուլի արդյունքները և եզրակացությունը, հաղթող ճանաչված մասնակիցների անունները, ինչն արձանագրվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից:

57. Բանավոր փուլի արդյունքները հրապարակելուց հետո անհամաձայնության դեպքում դրանք կարող են բողոքարկվել հանձնաժողովին մեկ ժամվա ընթացքում:

58. Բողոքարկման արդյունքում ընդունված որոշումը կարող է բողոքարկվել կրթության պետական կառավարման լիազոր մարմնին և (կամ) դատարան:

7. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

59. Մրցույթի արդյունքները հրապարակվում են մրցույթն անցկացնելուց հետո՝ նույն օրը: Մրցույթի արդյունքների հրապարակման ամփոփիչ արձանագրության մեջ լրացվում են՝

(Ձև 2).

1) մրցույթի անցկացման վայրը,

2) հաստատության լրիվ անվանումը,

3) թափուր տեղի անվանումը,

4) թափուր տեղերի քանակը,

5) մրցույթին մասնակցելու համար դիմած անձանց թիվը,

6) մրցույթին թույլատրված մասնակիցների թիվը,

7) գրավորի արդյունքը՝ մասնակիցների հավաքած միավորների կամ բալերի նշումով,

8) բանավոր փուլի մասնակիցների ցուցակը և ճիշտ ու թերի պատասխանների քանակը,

9) մրցույթի գրավոր և բանավոր փուլերը հաջողությամբ հաղթահարած մասնակիցների անվանացանկը և բանավոր փուլի ճիշտ ու թերի պատասխաններով ձևավորված միավորների քանակը,

10) հանձնաժողովի անդամների ստորագրությունները,

11) մրցույթի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը:

60. Ամփոփիչ արձանագրությանը կցվում են՝

1) անհատական թերթիկները,

2) հանձնաժողովի անդամների կարծիք(ներ)ը (առկայության դեպքում):

8. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

61. Մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցները տնօրենին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում են դիմում՝ աշխատանքի ընդունվելու համար, աշխատանքային պայմանագիրը կնքվում է դիմումը ներկայացնելուց հետո 3-օրյա ժամկետում՝ օրենքով սահմանված կարգով:

62. Եթե մրցույթում հաղթող են ճանաչվել մեկից ավելի մասնակիցներ, իսկ ներկայացված դիմումների քանակն ավելին է, քան թափուր տեղը, մասնակցի ընտրությունը կատարում է տնօրենը՝ նախապատվությունը տալով ըստ առաջնահերթության՝

1) առավելագույն միավորներ հավաքած մասնակցին (բանավոր փուլի ճիշտ ու թերի պատասխաններով ձևավորված միավորների քանակը),

2) տվալ բնակավայրի բնակչին,

3) մասնագիտական աշխատանքային փորձի առկայությանը,

4) կրթության որակավորման աստիճանին, եթե պահպանված են «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» օրենքի պահանջները:

Ձև 1
Դիմումի

Արցախի Հանրապետության
ուսումնական հաստատության
*(նշվում է հաստատության լրիվ անվանումը)*_____
(նշվում է առարկայի անվանումը)
_____
ուսուցչի թափուր պաշտոնի մրցույթին
մասնակցելու նպատակով հաստատության
տնօրեն
պարոն/տիկին_____ -ին
_____-ից
դիմողի անունը, հայրանունը, ազգանունը
_____
(դիմողի բնակության վայրը)
_____
(դիմողի հեռ.՝ աշխատանքային, բնակ., բջջ.)
_____
(անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)
Ծնված՝_____
օրը, ամիսը, տարին, վայրը

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով ուսուցչի (դաստիարակի) թափուր տեղի համար տրված հայտարարությանը, մրցույթի պայմաններին և անցկացման կարգին՝ խնդրում եմ գրանցել ինձ որպես մրցույթի մասնակից:

Քաղաքացիությունը_____

Դատապարտվել եմ՝ այո, ոչ (ընդգծել)

Դատվածությունս հանված կամ մարված է՝ այո, ոչ (ընդգծել)

Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվել եմ՝ այո, ոչ (ընդգծել)

Դատական կարգով մանկավարժական կամ վարչական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկվել եմ՝ այո, ոչ (ընդգծել)

Լեռնային Դարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 15-ի թիվ 301-Ն որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկի որևէ հիվանդությամբ տառապում եմ, չեմ տառապում (ընդգծել)

Համակարգչային գրագիտությունը

_____
(տիրապետման մակարդակը, համակարգչային ծրագրերի իմացությունը)

Կից ներկայացնում եմ մրցույթի մասին հայտարարությունում նշված փաստաթղթերը:

Նախազգուշացված եմ՝կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝_____«____»_____2020թ.

☞ 11

ՀԻՇՈՒՄ ԵՆՔ ԵՎ ՊԱՀԱՆՋՈՒՄ

ՍԻԱՄԱՆԹՈ. ՀՈՒՅՍԻ ՋԱՀԵՐՆ ՈՒ ԵՂԵՌՆԻ ՈՒՐՎԱԿԱՆԸ



Եթե լռենք, քարերը կաղաղակեն...

Հրաչյա Գևորգյան

Հիշում ենք և պահանջում...

Սիամանթո-Ատոմ Յարճանյան առեղծվածի մուտքը հայ գրականություն ինքնին ինքնատիպ երևույթ էր: Նա հայ ժողովրդի ծոցից, ազգային ծովացյալ վշտից ելած ամենավեհ, ազնիվ ու նվիրյալ զավակներից մեկն է, ում վիճակված էր թեև շատ կարճ, բայց բազմաբովանդակ, ասելիք ունեցող, հայրենասիրության լավագույն օրինակ ծառայող արժանի կյանք: Դա մի անանձնական կյանք էր, որը զոհ գնաց թուրք խուժանին՝ հավատով ու անմշուշ հույսով, որ էրգիրը կապրի, որ չի յաթաղանվի մեր բազմաչարչար ժողովրդի հազարամյա ճանապարհը, որ թուրքի՝ «թանգարանում մեկ հայ թողնելու» վայ ուրվականը երբեք իրականանալ, նյութական կերպարանք առնել չի՛ կարող ու չի՛ առնի: Սա հավատ էր եղեռնվող, օրը ցերեկով մորթվող ժողովրդի նորօրյա ռենեսանսի նկատմամբ:

Սիամանթոն ծնվել է 1878թ. Եփրատին ափամերձ Ակն քաղաքում՝ երգիչների ու բանաստեղծների ոստանում: Մանկության պայծառ հիշատակները երբեք չեն դավաճանել նրան: Նա իրեն բնութագրում է՝ «պատանի՛ մը երազկոտ», ով հոգու բոլոր ծալքերով այրվեց իր ծննդավայրի՝ Ակնա սիրով ու լուսեղեն կարոտով: Ամենևին էլ պատահական չէ, որ Շիրվանզադեն Սիամանթոյին անվանել է «բոցավառ տաղանդ»: Այո՛, նա բոցավառվեց ու հրկիզվեց հայրենի հիշատակներով՝ իրենց պարտեզի, հովիտների, ուռենիների ներդաշնակ հասակի, ադամանդյա առվակի, հայրենագեղ թռչունների, գորովալից զեփյուռի... Սիամանթոյի այս ներքին ինքնայրմանը վերջ չկար: Նա այրվում էր աստվածաշնչյան անկեզ մորենու պես՝ հոգու բոլոր բեկորներով, սրտի բոլոր թրթիռներով, մտքի բոլոր ծփանքներով: Հենց սրա համար է, որ բանաստեղծի պոեզիան կարդալիս հանկարծ սրտումդ հրդեհ է բռնկվում, իրար ետևից վառվում են մտքիդ ու մտածումիդ բոլոր ջահերը, հայրենակարոտ բաղձանքի, տառապանքի ու վրեժի շղարշով պատվում ու ջերմանում է ողջ էությունդ: Հենց այդ հուրն է, որ ճառագում է Սիամանթոյի պոեզիայում, որում ամեն քայլափոխի կարող ես հանդիպել հուրհեր ու բոցամորուս, արփիակն ու արեգական ծնունդ «խարտեաշ պատանեկիկին»՝ ռազմի ու կրակի աստված Վահագնին...

Սիամանթոյի մանկությունն ու բանական կյանքի սկիզբը խոստումնալից էին: Օր օրի գումարվում, կրկնապատկվում, բազմապատկվում էին նրա՝ բյուրեղի պես մաքուր անրջանքները: Բնավորությամբ չափազանց անհանգիստ, զվարթ ու կայտառ երեխա էր: Դպրոցում աչքի է ընկել իր բազմակողմանի իմացությամբ ու խորը գիտելիքներով: Հենց դպրոցական տարիներից էլ սկսել է իր առաջին գրական փորձերը՝ գրչով հուշարձան կանգնեցնելով իր պատանեկան անուրջների ու «մաքրաթև երազի» մասին: Բայց հանկարծ խզում է առաջանում պատանու երազանքների, վաղվա օրվա պատկերացումի ու գորշ իրականության միջև: Ռեալիզմն ու աշխարհի դրվածքը կուլ են տալիս բանաստեղծի հոգում այդքան փայփայած երկնատենչ, արևներով հագեցած երազանքները: Ի՞նչն էր սկիզբ առած հոգեկան վայրէջքի, կյանքի դրամայի ու վերջապես ողբերգության պատճառը: Սիամանթոյի գրական մեկնարկը միանգամից բախվում է 1895-1896թթ. ողբերգական իրականությանը՝ հայկական ջարդերին: Ընթացիկ իրադարձությունները ձևավորեցին Սիամանթոյի բանաստեղծական ոճը, նրա ողբերգական, բայց և՝ հերոսական կերպարը: Այլևս անհնար էր մնալ Թուրքիայում, ուր այդ օրերին անգթորեն խաչ էր հանվում հայը՝ ոչ միայն ֆիզիկապես, այլև հոգեպես ու գաղափարապես: Մտավորականներից շատերը մի կերպ փախչում ու ցիրուցան են լինում հարակից երկրներում ու Եվրոպայում: Եվրոպական պերճ ոստանները, որտեղ կյանքն ուներ վարընթաց հոսք, տարագիր հայի համար դեռևս չլսված ու չտեսնված կանոններ, նրա համար հայրենիք դառնալ չէին կարող: Տարագիրներից շատերը, ինչպես այս դեպքում, այնպես էլ հետագայում իջան փարիզյան կյանքի հատակը, այլասերվեցին, կորցրին իրենց ազգային դիմագիծը, շատերն էլ պարզապես չդիմացան արտասահմանյան կյանքի առաջարկած դժվարություններին և հոգևոր ու ֆիզիկական տառապանքին: Սիամանթոյի համար ևս սկսվել էր բարոյական կորուստների ու անկումների մի ծանրագույն շրջան: Եվ որքան էին մեծ տառապանքին բաց ճակատով դիմակայելու կամքի ու այդ անկման միջև եղած խզվածքն ու հեռավորությունը, որ նույնիսկ մի պահ իրականությունից կոտրված Սիամանթոյի ուժերը տեղի են տալիս. Փարիզում նա մտածում է իրեն նետել Սենա գետը: Ինչպիսի՜ հոգևոր ու բարոյական տառապանք, որին վերջ տալու միակ ճանապարհը նա տեսավ ինքնասպանության մեջ: Սակայն ինչպես պարզվեց, դա միակ ճանապարհը չէր, առհասարակ դա ճանապարհ չէր: Սիամանթոն ու իր նմանները ոչ միայն դիմակայում են ժամանակի շրջադարձերին ու ցնցումներին, այլև դառնում են հոգևոր հայրենիքի վսեմ գաղափարականի խիզախ կրողները: Նրանց շնորհիվ նորից շունչ է առնում ու կենսականանում հայ միտքը: Նույնիսկ այս դժվարին օրերը չխանգարեցին նրանց՝ աչքերը երկինք ուղղել, վշտի միջից ժպտալ, «Հայր մեր»-ը մրմնջալ, ապրե՛լ...

Սիամանթոն նյութական ու բարոյական զրկանքների հնոցից մոխրացած դուրս չեկավ: Հայրենյաց կանչը չդադարեց քաղցրորեն հնչել հայորդու ականջներում: Նա իր ողջ էությամբ կլանեց հայ ժողովրդի տիեզերածավալ վիշտը, վերապրեց իր որբ ժողովրդի ողբերգական ճակատագիրը: Որպես «նոր դարերի մարգարե»՝ Սիամանթոն լսեց իր ժողովրդի խորհրդավոր պահանջը, կամքը, հրահանգը. «Եվ դուն սա՛ մաքրափայլ թերթերուդ վրան, ցեղին ցավը և ցեղին ուժը բանաստեղծե»: Եվ գտավ Սիամանթոն իր առաքելությունը՝ ուժերի ողջ գերլարումով «ցեղին ցավը» և «ցեղին ուժը» բանաստեղծելով: Հաջորդաբար լույս տեսան բանաստեղծի ժողովածուները՝ «Դյուցազնորեն», «Հայորդիներ», «Հոգեվարքի և հույսի ջահեր», «Կարմիր լուրեր բարեկամես»:

Սարսռալի պատկերներով, համեմատություններով ու չափազանցություններով է գրված «Հոգիս» բանաստեղծությունը: Բանաստեղծի հոգու լուսասփյուռ ջահերը արեգակում են նրա մտածումը: «Հոգիս ա՛ն է, որ բյուրավոր անգամ ձեր ամենուն ցավն ապրեցավ»,- ազգին խոսք է հղում բանաստեղծ որդին: Նրա հոգին այն վայրն է, «ուրկե արյունռուշտ լուսին մը բարձրացավ անմեղներու կոտորածեն ծովացյալ դաշտի մը վրա», այն անտառն է հողմակոծ, «որուն ավազաններուն շուրջ... եղբայրական արյունի հեղեղներ կը հոսին»: Սիամանթոյի հոգին երկինք է, որի բոլոր հուսո աստղերը թափվել են, այնտեղ անգամ լույսի փոքրիկ բեկված ճառագայթ չկա: Սակայն այդ հոգին «բարկության ու ցասումի հով մըն» է. նաև, որի ուժով «արյունարբու ռազմագունդերը պիտի նահանջեն»: Այդ Հոգու անունը «Կարմիր հուսահատ» է, որը «անընկճելի հույսին համար», իբրև առաքյալ ու զինվոր, դեպի «մահը պիտի թե»: Հոգեվարքի ու թաղման թափորի տխուր արձագանք է այս բանաստեղծությունը, բայց նաև՝ հերոսական պայքարի կոչ ու հրավեր:

Աշխարհն առաջին հայացքից այնքան անչար, գեղեցիկ ու թովիչ է, որ թվում է՝ պոետն աշխարհ է գալիս՝ բնության, սիրո, արգասաբեր հողի, հացի արարման ու խաղաղության գովքն անելու: Սակայն այլ էր Սիամանթոյին վերապահված գրական ուղին: Նա ստիպված էր էջ առ էջ իր թշվառ ազգի անասելի ցավը երգել: Ավերակված ու արնաթաթախ հայրենիքի հիշատակները գալիս են՝ նաև թղթի վրա արտապատկերվելու.

Ա

Եվ մաքրաթև երազիս հետ միանակ էի, հովիտներուն մեջ հայրենի,

Քայլերս էին թեթև, ինչպես քայլերը խարտիշագեղ եղնիկին,

Եվ զվարթությամբ կը վազեի, կապույտեն և օրերեն բոլորովին գինով,

Աչքերս ոսկիով և հույսով՝ և հոգիս աստվածներով լեցուն...

Դ

Այս գիշեր երազիս մեջ, ձեռքս առի գքեզ, ո՜վ քաղցրախոս Սրինգ,

Շրթունքներս գքեզ ճանչցան՝ ինչպես համբույր մը հին օրերու,

Բայց շունչս՝ հիշատակներու զարթնումեն, հանկարծորեն մեռավ,

Եվ երգիս տեղ՝ շիթ առ շիթ, շիթ առ շիթ, արցունքներս էին, որ ինկան վար...

Մտածում ես՝ ինչն էր պատճառը, որ աչքերը «ոսկիով և հույսով» և հոգին «աստվածներով լեցուն» բանաստեղծի հոգին խավարում է, անուշ մեղեդիների փոխարեն սրնգից արցունքներ են կաթկթում, ցավի մոլորակաչափ արցունքներ... Ազգային տիեզերամասշտաբ ցավը, մահվան ու կոտորածի սոսկալի պատկերներն ու մահասարսուռ ապրումներն ազդու կերպով ներխուժում են բանաստեղծի «մաքրաթև երազի» մեջ՝ պղտորելով, աղավաղելով այն: «Արյուն է, որ կը տեսնեմ»,- այսպես է բացատրում Սիամանթոն այսպիսի խոշոր շրջադարձը՝ ուրախության անրջահամ երգից դեպի արցունքի երգ: Նրա յուրաքանչյուր տողի, վանկի ու բառի վրա արյուն կաթկթաց, արցունք տեղաց...

Հետո ծնվում են նոր ցավերգանքներ ու տեսիլներ, մի ողջ ազգի կողմից Գողգոթայի նորօրյա վերապրումներ: «Վսեմական քերթողը» (Դ. Վարուժանի բնութագրումը), որն ընդամենը 20 տարեկան էր, Փարիզում թղթին է հանձնում հոգին տակնուվրա արած ցավը՝ գրելով «Մահվան տեսիլքը»: Ինչպիսի հոգեկան վիճակում պետք է լինել՝ նման տողեր գրելու համար՝ մահոտ, մահահոտ, արյունոտ, վերքոտ... «Կոտորա՜ծ, կոտորա՜ծ, կոտորա՜ծ... Քաղաքներուն մեջ և քաղաքներեն դուրս»,- հոգեկան անհուն ցավից ճչում է բանաստեղծը: Աշխարհը չի ուզում լսել, աշխարհը խուլ է ուրիշի ցավի նկատմամբ ու այն էլ՝ ինչպիսի՜ ցավի... Բայց բանաստեղծի մտապատկերը զգայական հուզաշխարհում տագնապով էլի արձագանք է տալիս՝ «կոտորա՜ծ, կոտորա՜ծ, կոտորա՜ծ»: Սիամանթոն խորապես ցավում է. «Ավա՜ղ, առաջ արշալույս մը կար, որ բուրաստանի մը նման կը ծաղկեր», իսկ հիմա այլ պատկեր է՝ «նվիրական հողին արշալույսները մեր արյունեն են կարմիր», անհայտի ու անծիրի երազանքները վերածվում են չարչարանքի երազների՝ մարդկային խելագար ճիչեր, բորենիների ու շների՝ արյան ծարավի ոռնոց, ագռավների՝ խրախճատենչ կռինչ...

... Եվ սկսվում է եղեռնապատումը... Տարածվում են «արևադարձային տաքություն» բերող հրդեհները, որոնց մարել չկար: Քամին մեր կսկծացող վերքին փչելու ու հովացնելու փոխարեն, հրդեհների հետ դաշինք կապած, ավելի ու ավելի տարածեց հայի տունն ու տեղը, խոտի դեզերը, «գանձերն ու սրունքներն» իր լեզվակների տակ առնող հրդեհը: Քամին էլ մատնեց հային, քամին էլ դավաճան դուրս եկավ... Հովիտներից ու գերեզմաններից բանաստեղծի ականջին են հասնում շների մահաձայն ոռնոցները, կարմրալիք ծովերի վրա փոթորիկ է բարձրանում, ձյունն իջնում է մարմարի ծանրությամբ: Եվ այնքան անմարդկային են թուրքի վայրենությունները, որ բանաստեղծը խնդրում ու հորդորում է պարզապես փակել պատուհանները, փակել աչքերն ու ականջները.

Օ՜, պատուհանները փակեցեք ու աչքերնիդ ալ,

Կոտորա՜ծ, կոտորա՜ծ, կոտորա՜ծ...

«Մոխիրներու և մահերու դանթեական ճանապարհ»,- այսպես է Սիամանթոն բնութագրում հայ ժողովրդի անցած ճանապարհը: Աշխարհը երկգույն է Սիամանթոյի աչքերով՝ կարմիր ու սև: Կարմիրն արյան գույնն է, որ հայ մարդուց շատրվանվեց ու հեղեղ դարձավ, իսկ սևը՝ չարագուշակ մառախուղների գույնը և այն գորշ ամպերի, որոնց բախումից կայծակ է երերում՝ այրելով, մոխրացնելով, հրի մատնելով ամենը...

Սիամանթոյի հավերժական, խորհրդավոր ու կարոտաշատ երգերից է «Ափ մը մոխիր...» բանաստեղծությունը, որի քնարական հերոսը հենց ինքը բանաստեղծն է՝ օտար ափերում թափառող տարագիր հայը, որն արցունքով լսում է, որ սարսափի ու կոտորածի մի օր ավերակվել է իր հայրենի օջախը, կրակի մատնվել տան գորգերը, փշրվել ոսկեծիր այն հայելին, որի «եթերային խորության» մեջ տարիներ շարունակ՝ մանկությունից ի վեր, ցոլացել են իր երազներն ու սերերը, ցամաքել է բակի աղբյուրը, կոտրտվել պարտեզի ուռենին ու թթենին, չկա վանդակի կաքավը... Սիամանթոն, մի պահ վերացած այս սգից, հիշողության թևով տեսնում է իրենց՝ «ապարանքի մը պես» մեծ ու շքեղ տունը, որտեղ ժամանակին «թագավորել» է: Այն տունը, որի տանիքին աստղածորան գիշերներին հաճախ էր բազմում ու, աչքերը փակելով, լսողությունը լարելով, ունկնդրում «ահեղավազ» Եփրատի ջրերի հաճելի աղմուկը: Առասպել է դարձել հայրենի տունը, կործանվել, սակայն դրանից հոգեկան կապը չի թուլանում, և բանաստեղծի միակ ցանկությունն է, որ իր հրդեհված, քարուքանդ եղած հայրենի տան մոխիրներից մի բուռ բերվի՝ իր աճյունին խառնելու, սրտի վրա ցանելու.

Է

Հայրենի՛ տուն, հավատա՛, որ մահես հետո

Քու ավերակներուդ սևին վրա իմ հոգիս

Պիտի գա, որպես տատրակ մը տարագիր,

Իր դժբախտի երգը և արցունքը լալու...

Ը

Բայց ո՞վ պիտի բերե, ո՞վ պիտի բերե, ըսե՛,

Քու սրբազան մոխիրեդ ափ մը մոխիր,

Մահվանս օրը, իմ տրտում դագաղիս մեջ,

Հայրենիքս երգողի իմ աճյունին խառնելու...

Թ

Ափ մը մոխի՜ր աճյունիս հետ, Հայրենի տուն,

Ափ մը մոխի՜ր քու մոխիրեդ, ո՞վ պիտի բերե,

Քու հիշատակե՜դ, քու ցավե՜դ, քու անցյալե՜դ,

Ափ մը մոխիր... իմ սրտիս վրան ցանելու...

Սա հայրենասեր հայի խոսքն է՝ ի խորոց սրտի, որ ծավալվում է սահման չճանաչելով՝ հաստատելու, որ հիշողությունը չի մթագնում ավերակված հայրենի տան մասին: Հոգեկան ամուր կապը, ճիշտ է, կորստյան անամոք ցավով է մկրտում բանաստեղծ որդուն, սակայն քանի դեռ ապրում է հիշողությունը, ապրում է նաև հայրենի օջախը: Երևի Սիամանթոյի հոգին այսօր էլ թևածում է Եփրատի ջրերի, Ակնա անդաստանների ու մրգաստանների, ավերակ դարձած հայրենի տան վրա...

Սիամանթոն միայն ցավի ու տառապանքի երգիչ չէ, բնա՛վ: Նրա երգերում ծփում են Հույսի ոսկեհասկ արտերը, հարություն է առնում խաղաղության, հողի, հացի ու աշխատանքի բերկրանքը: Ողբերգականի կողքին ծնվում են հույսի ու սիրո փառաբանումն ու տարփողումը, մահի ու ավերումի կողքին շունչ է առնում խաղաղ կյանքը, մահակնչ շեփորները լռեցվում են արարումի ու հայրենյաց հրավերի կոչնակներով, մարմարի ծանրությամբ իջնող ձյունը փոխարինվում է արտերն ու դաշտերն օծող առատ անձրևներով: Փաստորեն Սիամանթոն երկու հակադիր բևեռների երգիչ է, մի կողմից՝ ազգային ցավի ու տառապանքի, արյան ու արցունքի, մյուս կողմից՝ հավերժական պատկերների ու զգացումների՝ հույսի, հավատի, աշխատանքի, հողի ու

ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

արծաթե գութանների, արևաբեր ու լուսահորիզոն արշալույսների: Բանաստեղծը Հեռավոր Ամերիկայից հրավիրում է տարագիր հայությանը՝ «գութանին և արորին ժանգը նորեն սրբելու», որպեսզի «հնադարյան հայրենի հողը ծաղկոտի», հրավիրում է՝ տեր կանգնելու զավակներին գրկաբաց սպասող հայրենիքին: Իր այս հրավերին Սիամանթոն առաջինն ականջալուր եղավ: Խիզախորեն արհամարհելով բոլոր վտանգները՝ նա գնաց ու կանգնեց իր հայրենակիցների կողքին, կիսեց նրանց բախտը՝ լավ իմանալով, որ շատ հնարավոր է՝ իր մաշկի վրա զգա բոլոր այն վայրագությունները, որոնք մահվան խելացնոր տեսիլների ձևով հաճախ էին տանջել իրեն անվերջանալի թվացող երկար գիշերների ընթացքում:

Հրավեր է նաև «Սուրբ Մեսրոպ»-ը՝ ուղղված գալիք սերունդներին՝ հոգևոր ու գաղափարական մաքառումի համար: Սիամանթոն չէր գրի այս պոեմը, եթե խորապես չգիտակցեր գրերի գյուտի հսկայական քաղաքական նշանակությունը հայապահպանման ու ազգային զարթոնքի սուրբ գործում: Հայոց այբուբենը եղավ այն հզոր զենքը, որը տվեց մեզ պաշտպանվելու հնարավորություն արևմուտքի և արևելքի միջև, դարձավ այն անսասան կամուրջը, որն իրար կապեց անցյալն ու ներկան, ներկան ու ապագան, ապագան ու հավիտենությունը: Մաշտոցի լուսե կերպարի շուրջ ստեղծվում է մի անզուգական ու չքնաղ կոլորիտ՝ ի փառաբանումն հայոց Ալֆայի ու Օմեգայի Արարչի: Դ. Վարուժանը նկատում է այս պոեմի նարեկական շունչը. «...-Նարեկացիին հետ կապող թելն էր, որ ամրակուռ շղթայի մը վերածեց»: Այո, ոճական մանրամասներով, պատկերներով, կախարդական բառախաղով ու նկարագրական ճոխ համադրումներով Նարեկացու «Մատյան»-ի ու Սիամանթոյի այս երկի միջև աղերսներն ու զուգահեռները միանգամայն տեսանելի են: Պատահական չէ, որ Սիամանթոն պատիվ ունի կոչվելու «Նոր շրջանի Նարեկացի»: Եթե Նարեկացին ակնածանքով խոնարհվում է Արարիչ Աստծո առաջ, ապա Սիամանթոն մեկ այլ Արարչի՝ «Օշականեն մեզի հսկող» մտքի Աստծո առաջ է ծնկի գալիս՝ պատգամելով մեզ նույնն անել՝ նոր ժամանակներում ևս արժևորելով ու անաղարտ պահելով հայերենը:

Սիամանթոյի բանաստեղծական գիտությունը բարդ է ու բազմաշերտ: Նա միանգամայն հեղաշրջեց հայ պոետիկայի համակարգը՝ իր գործերը լցնելով սիմվոլիզմի գեղագիտական սկզբունքով, վերլիբրի՝ բարձր լարման հասնող ռիթմով, երևակայության՝ տեսիլային վերացությամբ, որը ստեղծում է ողբերգական իրականության ու մթնոլորտի հոգեբանական էկվիվալենտը:

1914թ. Սիամանթոն Շվեյցարիայի Ժնև քաղաքում էր, երբ վրա է հասնում համաշխարհային պատերազմը՝ փոխելով տերությունների քաղաքական խաղաքարտերը: Թուրքիան, օգտագործելով պատեհ առիթը, Գերմանիայի հետ ռազմական դաշնակցությամբ փորձում է հագուրդ տալ պանթուրքիզմի ու պանիսլամիզմի իր ծրագրերին, որի ճանապարհին «լուծում» է Հայկական հարցը՝ զանգվածային ջարդերով ու աքսորներով: Մինչ այդ՝ 1909թ. Ադանայի ջարդերով Թուրքիան ամբողջովին չքողազերծեց իր հակահայկական բարբարոսական ծրագիրը: Բայց մի բանաստեղծ, միայն մի բանաստեղծ մարգարեացավ գալիք աղետների ու սարսափների ողջ ծանրության մասին: Այդ բանաստեղծի անունն էր Սիամանթո: «Կարամազով եղբայրներ» վեպում այսպիսի հետաքրքիր ու դիպուկ տողեր կան. «...Գազանը երբեք չի կարող այնքան դաժան լինել, որքան մարդը, այնպես արտիստորեն, այնպես գեղարվեստորեն դաժան: Վագրը պարզապես հոշոտում է, պատառոտում և այդ կարող է միայն անել: Նրա մտքով անգամ չէր անցնի մարդկանց ականջները գամել ցանկապատին և ամբողջ գիշերը թողնել այսպես... Իսկ այդ թուրքերը ի միջի այլոց հեշտասիրությամբ տանջել են նույնիսկ երեխաներին, մոր արգանդից դաշույնով կտրելհանելուց սկսած մինչև ծծկեր երեխաներին վեր նետելը և սվինի ծայրով բռնելը՝ այն էլ մոր աչքերի առաջ...»: Սա չտեսնված քսենոֆոբիա է, սադիստական վանդալիզմի բարձրագույն աստիճան: Այսպիսին է թուրքը պատմության ու Աստծո դատաստանի առաջ:

Արամ Ինճիկյանը պատմում է, որ Ժնևում Սիամանթոն չլսեց Ավ. Իսահակյանի՝ Կ.Պոլիս չվերադառնալու խորհուրդը.

«- Պիտի երթամ, իմիններս հոն են...

- Գնաց ընկավ գազանի բերանը,- մի տխուր դադարից հետո ավելացրեց Վարպետը»:

Հայրենասիրության ու ազգանվիրումի բարձրակե՞տ...

Ոգևորված երիտթուրքերը 1915թ. ապրիլին սկսում են իրականացնել իրենց դժոխային ծրագիրը՝ նախ գլխատելով հայ միտքը, սրի քաշելով մտավորական զանգվածին: Ապրիլի 11-ին (նոր տոմարով՝ ապրիլի 24) բանտարկվում է 210 մտավորական՝ Սիամանթոն, Դ. Վարուժանը, Գր. Զոհրապը, Ռ. Սևակը, Երուխանը, Եր. Օտյանը, Կոմիտասը, Թլկատինցին և այլք: Սիամանթոյին բանտարկում են Այաշում, այնուհետև տանում անհայտ ուղղությամբ ու Անկարայից ոչ հեռու մի ձորում 1200 հոգու հետ միասին օգոստոսի վերջին գազանաբար հոշոտում: Սիամանթոյի ներքնատեսությունն ու սարսափելի տեսիլները ճակատագրի կույր ու լկտի խաղով ճիշտ դուրս եկան: Թուրքը գազանի մոլեռանդությամբ հոշոտում ու խոշտանգում էր հային, թողնում անդագաղ, արյան խրախճանքին հրավիրում ագռավներին ու վայրի թռչուններին: Իրականություն դարձավ Ավ. Ահարոնյանի մտապատկերում ուրվագծված սարսափը. «Սատանաները գնդակ են խաղում հանճարների գանգերով լցված դամբարաններում...»: Իրականություն դարձավ նաև Սիամանթոյի եղեռնապատումի դանթեականը, որն, ըստ իս, բացառապես անգերազանցելի է:

Սիամանթոյի մահվան լուրն առած մոր՝ Նազենիի ձեռքով Կ.Պոլսի՝ իրենց տան բակում տնկած թթենին պիտի որդու անմար հիշատակը խնկարկեր: Տարիներն իրար ետևից գլորվում էին, թթենին լիուլի բերք էր տալիս, մայրը սպասում էր, իսկ որդին՝ Ատոմը, չկար: Անգամ ծանր հոգեվարքի պահին մայրը կարծում էր՝ որդին տանն է, մյուս սենյակում...«Ո՞վ կա, արդյոք, ներսի սենյակում»,- մի քանի անգամ անընդհատ կրկնվեցին մահացող մոր կարոտի խոսքերն ու հավերժորեն մարեցին ակնթարթ դարձած ժամանակի թրթռուն խորության մեջ...

Սիամանթոյի ողջ կյանքն ու ստեղծագործությունը կրակված հայրենանվիրումի ու անանձնական սիրո, պայքարի ու մաքառումի, հավատի ու հաղթանակի արձագանք են: Երբ տալիս ես նրա անունը, անմիջապես պատկերացնում ես նրան հայրենիքի ու ազգային ճակատագրի հետ օրգանական կապերի մեջ: Սիամանթոն ապրում էր հայրենիքով, հայրենիքն ապրում էր նրա հոգում: Նա կոչված էր լալու իր ազգի որբ ու թշվառ վիճակը, բայց և՝ վառելու հույսի բոլոր՝ մեծ ու փոքր ջահերը: Սիամանթոն դարերի իմաստության ու մաքառումի պատգամախոս է՝ անձնավորելով պողպատե կամքի ու կուռ գաղափարի մի հզոր անհատականություն, որի անունը Պայքար է, իսկ վախճանը՝ Հաղթանակ: Ահա «առնական խիզախության փողհարը» վարանոտ, հուսախաբ ու վշտահար կանգնած է մոլորված ժամանակների կանգառներում, մինչև որ հանկարծ օդում պայթում է «մարմարեղեն հույսի ռահվիրաների» թնդուն ձայնը՝ խախտելով շիրմական լռությունը և բերելով տիեզերքի իմաստության գրքի՝ Ռիգ Վեդայի հուսաշատ խոսքերը. «Այնքա՜ն արշալույսներ կան, որ տակավին չեն ծագած...»: Ննջի՛ր խաղաղությամբ, բանաստե՛ղծդ հայոց, մենք կբերե՛նք խաղաղության երանգներով սրբորեն օծված այդ արշալույսները...

«Ես երգելով կուզեմ մեռնիլ». ահա Սիամանթոյի լուսեղեն կամքը, որը ճշգրտորեն ուրվագծվեց նրա ճակատագրում: Ազգային հոգեվարքի, կոտորածների ու ցավերի դաժան մղձավանջում բանաստեղծը ստիպված եղավ դարձի գալ դեպի հեթանոսական ժամանակները, դեպի հեթանոս հզոր աստվածներին: Նա աղոթք հղեց առ դիցուհին Անահիտ՝ «ահեղ աստված մը ծնանելու մեզ» և խաչափայտի երկու կտորները նետեց Անահիտ աստվածուհու բագնի կրակի մեջ: Արդյունքը, սակայն, եղավ այն, որ հին ու նոր բոլոր աստվածները երես թեքեցին հայից: Սիամանթոյի պատրանքներն ու հույսերը հօդս ցնդեցին: Եղեռնից մի քանի ամիս առաջ գրած նամակներից մեկում բանաստեղծն ասում է. «Այս հուսահատության, զզվանքի, անկարելի ստրկության, պոռնիկ համակերպումի և իմ բառարանես և Ձեր բառարանեն բացակա ամեն հայհոյանքի արժանի օրերուն մեջ, հայ օրերուն մեջ...»: Ճիշտ էին Սիամանթոյի բոլոր մարգարեությունները ու կասկածանքները: Նա դարձավ իր իսկ գուշակած աղետի զոհը, եղեռնի զոհը, «մոխիրների և մահերի դանթեական ճանապարհի» չարչարյալ ճամփորդը...

Ու քանի դեռ լուծված չէ մեր պահանջատիրությունը, մեր գլխին ճոճվող սուր դարձած Հայկական հարցը, քանի դեռ շղթայված Արարատն ու հայոց պատմական հողերը չեն անցել իրական տիրոջը, քանի դեռ մեր կրծքից անպակաս է անմոռուկը, և լսում ենք ցեղի արյան սուրբ կանչը, քանի դեռ զոհվում է հայ զինվորը, ես Սիամանթոյի պես երիցս աղաղակում եմ խուլ աշխարհի ականջին. «Ո՛Վ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ, ԹՈ՛Ղ ԵՍ ԹՔՆԵՄ ՔՈՒ ՃԱԿԱՏԻԴ...»...

Կարեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԱրՊՀ իրավագիտության բաժնի ուսանող, Սզնեքի միջն. դպրոցի նախկին շրջանավարտ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՐԳ

9☜ **Ձև 2**

Ամփոփիչ արձանագրություն

Արցախի Հանրապետության_____շրջանի
(Ստեփանակերտ քաղաքի)_____

(ուսումնական հաստատության լրիվ անվանումը, ըստ կրթական ծրագրերի աստիճանի) ուսուցչի թափուր աշխատատեղի (լրացվում է մասնագիտության անվանումը)

_____համար հայտարարված մրցույթի.

1. Թափուր աշխատատեղի քանակը _____
2. Մրցույթին մասնակցելու համար դիմած անձանց թիվը _____
3. Մրցույթին թույլատրված մասնակիցների թիվը _____
4. Գրավոր փուլի ձևը _____
5. Գրավոր փուլի արդյունքը **(մասնակիցների անունը, ազգանունը, հավաքած միավորները)**

1)
2)
3)

6. Բանավոր փուլի մասնակիցների ցուցակը և ճիշտ ու թերի պատասխաններով ձևավորված միավորների քանակը:

1)
2)
3)

7. Մրցույթի գրավոր և բանավոր փուլերը հաջողությամբ հաղթահարած մասնակիցների անվանացանկը և երկու փուլերի արդյունքում հավաքած ընդհանուր միավորները **(բանավոր փուլի ճիշտ ու թերի** պատասխաններով ձևավորված միավորների քանակը)

1)
2)
3)

8. Հանձնաժողովի անդամների անունը, ազգանունը և ստորագրությունը՝
1) Հանձնաժողովի նախագահ՝_____
2) Հանձնաժողովի անդամ՝_____
3) Հանձնաժողովի անդամ՝_____
4) Հանձնաժողովի անդամ՝_____
5) Հանձնաժողովի քարտուղար՝ _____

Ձև 3

Անհատական թերթիկ

1. Հանրակրթական ուսումնական հաստատության անվանումը _____
2. Առարկան_____
3. Մասնակցի անունը, ազգանունը _____
4. Տոմսի համարը _____
5. Հարցերի գնահատականները (**«ճիշտ», «թերի» կամ «սխալ»** (միավորը՝ թվերով),

1) _____
2) _____
3) _____
4) _____
5) _____
6) _____
7) _____
8) _____

9. Ընդամենը հավաքած «ճիշտ և թերի» պատասխանների քանակը
ճիշտ _____
թերի _____
Ընդհանուր՝_____
10. Եզրակացություն՝ _____

(Հաղթահարել է բանավոր փուլը, չի հաղթահարել)

11. Հանձնաժողովի անդամների անունը, ազգանունը և ստորագրությունը
1) Հանձնաժողովի նախագահ՝_____
2) Հանձնաժողովի անդամ՝ _____
3) Հանձնաժողովի անդամ՝ _____
4) Հանձնաժողովի անդամ՝ _____
5) Հանձնաժողովի քարտուղար՝_____
12. Մասնակցի ստորագրությունը՝ _____ :

Ձև 4

Ինքնակենսագրություն

1. Աշխատանքային գործունեությունը (վերջին աշխատանքի վայրը լրացվում է առաջինը)
2. Կրթությունը, մասնագիտական կրթության որակավորման աստիճանը, կրթության վկայագրերը (դիպլոմներ, հավաստագրեր, վկայականներ)
3. Կոչումներ
4. Որակավորման տարակարգ
5. Հրատարակած հոդվածներ
6. Լեզուների իմացություն
7. Համակարգչային իմացություն
8. Այլ տվյալներ

ԴԻՄԱՆԿԱՐ

ԵՐԲ ՀԱՍԿԱՆՈՒՄ ԵՍ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԴ

Շախմատի կանանց միջազգային վարպետ, միջազգային գրոսմայստեր, ուսուցիչ, գիտաշխատող, բազմազավակ մայր, գեղեցկուհի և վերջապես՝ արցախցու հարս: Հայտնի կինոֆիլմի հերոսի տարբերակով կարճ այսպես կարելի է բնութագրել շախմատի Հայաստանի աղջիկների եռակի փոխչեմպիոնուհի, «Դինամո» մարզընկերության Խորհրդային Միության աղջիկների առաջնության հաղթող, 32-րդ համաշխարհային օլիմպիադայի հատուկ մրցանակակիր, Պրիմորիեի երկրամասի կրկնակի և Հեռավոր Արևելքի չեմպիոնուհի, Ռուսաստանի կանանց ակումբային առաջնության 3-րդ մրցանակակիր Նաիրա Մովսիսյանին:

Նրա հետ մեր ծանոթությունը սկսվեց անցյալ տարվա ամռանը, երբ Հայաստանի շախմատի ակադեմիայի ներկայացուցիչների կազմում նա Ստեփանակերտում էր Արցախի «Շախմատ» առարկան դասավանդող ուսուցիչների համար վերապատրաստման դասընթացներ անցկացնելու նպատակով: Դրանից օրեր առաջ էլ էր այստեղ՝ որպես Համահայկական խաղերի շախմատ մրցածևի գլխավոր մրցավար:

Իր կանացիությամբ ու համեստությամբ, առարկայի վերաբերյալ հարուստ գիտելիքներով, մանկավարժական վարպետությամբ նա անմիջապես գրավեց Արցախի ուսուցչական լսարանը:

Շատ երկար ժամանակ պետք չեղավ՝ հասկանալու համար, որ շախմատը Նաիրա Մովսիսյանի ճակատագիրն է:

Ծնվել է Երևանում՝ մասնագիտությամբ գեղանկարիչ, գործունեությամբ շախմատի մարզիչ Նորայր Մովսիսյանի ընտանիքում: Մանկուց սիրել է շախմատը, վեց տարեկանից է սկսել զբաղվել շախմատով: 8 տարեկանում եղել է 1-ին կարգային, 13-ում՝ վարպետության թեկնածու, 1995թ. Հայաստանի կանանց առաջնությունում դարձել է բրոնզե մեդալակիր՝ դառնալով հավաքականի անդամ: 1996թ. Երևանի ֆիզիկական կուլտուրայի շախմատի ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանողուհին Շախմատի 32-րդ համաշխարհային օլիմպիադայում, որը տեղի է ունեցել Երևանում, շահել է հատուկ մրցանակ՝ վաստակելով 8,5 միավոր 11 հնարավորից և լրացրել միջազգային վարպետի նորման:

Ինստիտուտում գերազանցությամբ սովորելուն զուգահեռ աշխատել է որպես շախմատի մարզիչ: Այնուհետև ամուսնանալով (ամուսինը նույնպես շախմատիստ է)՝ տեղափոխվել է ՌԴ: Շարունակել է շախմատային կարիերան: Մասնակցել է միջազգային մրցաշարերի, Եվրոպայի կանանց առաջնությունների (վերջին մեկ տարին՝ ՌԴ դրոշի տակ): Սովորել է Խաղաղօվկիանոսյան տնտեսագիտական պետական համալսարանում: Այդտեղ դասավանդել է շախմատ, պարապել համալսարանական թիմի հետ: ՌԴ-ում դարձել է միջազգային գրոսմայստեր:

«Երևի շախմատն է եղել ձեր միության պատճառը»,- հարցնում եմ նրան, որին հետևում է այս պատասխանը. «Շախմատը ոչ միայն իմ ընտանիքն է կազմավորել: Հետաքրքիր է, որ հայրս էլ մորս հետ ծանոթացել է շախմատի միջոցով: Երկուսն էլ Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում են սովորել: Ֆիզկուլտուրայի դասախոսը հորս ասել է, որ շախմատի ուսանողական սպարտակիադա պետք է լինի, թող մի քիչ պարապի մորս հետ»: «Ուրեմն շախմատը ձեր ընտանիքի ճակատագիրն է»,- համոզմունքս ավելի է ամրապնդվում:

2006թ. երիտասարդ շախմատիստների ընտանիքը, վերադառնալով Հայաստան, հիմնավորվել է Աբովյան քաղաքում, որտեղ եվրոպական չափանիշներին համապատասխան շախմատի դպրոց էր բացվել: Շախմատի ակադեմիայից հետո իր պայմաններով այն երկրորդն էր Հայաստանում, և Նաիրան դառնում է այդ դպրոցի հիմնադիր տնօրենը: Իսկ երբ 2011թ. շախմատը որպես առարկա մտավ հանրակրթական դպրոց, Նաիրա Մովսիսյանը դարձավ Կոտայքի մարզի 90 հանրակրթական դպրոցների «Շախմատ» առարկայի համակարգողը: Նրա խնդիրն էր գտնել մասնագետներ, վերապատրաստել, կատարել դասալսումներ, օգնել մեթոդապես, հետևել ծրագրերի կատարմանը: Տարեկան երեք անգամ էլ վերապատրաստումներ է անցկացնում: Իսկ 2018թ. սեպտեմբերից աշխատում է նաև Շախմատի գիտահետազոտական ինստիտուտում՝ որպես գիտաշխատող: Մասնակցում է բոլոր հետազոտություններին, որոնք կապված են աշակերտների վրա «Շախմատ» առարկայի ազդեցության հետ:

Այս գերզբաղվածության պայմաններում հասցրել է ունենալ 5 երեխա: Եվ իր բոլոր մարզական կոչումներին ավելացնել ամենաբարձր՝ «Հերոսուհի մայր» կոչումը, որպիսի մեծարանքով նրան մեզ ներկայացրեց գործընկերը՝ Շախմատի ակադեմիայի մարզիչ Սամվել Միսակյանը:

Թե ինչպես է կարողանում ժամանակն օգտագործել անմնացորդ՝ առանց որպե իսկ զուր վատնելու, ասում է. «Ես ողջ կյանքում ուսումս համատեղել եմ շախմատի, աշխատանքս՝ ընտանիքի հետ: Իմ կարծիքով ամենամեծ երջանկությունը լավ ընտանիքն ու երեխաներն են: Մենք երբեք չենք խուսափել երեխաներ ունենալուց: Փառք Աստծո, ունենք չորս աղջիկ և մեկ տղա, մեր ամեն մի երեխա իր «ղսմաթն» է բերել մեր ընտանիքին»,- ասում է բազմազավակ մայրը, որն արդեն թոռնիկներ ունենալու մասին է երազում, թեև ընդամենը 43 տարեկան է:

«Ինձ միշտ ասում են՝ շուտ ամուսնացար, կարող էիր կարիերադ ավելի երկար շարունակել, բայց կարծում եմ՝ առաջնայինը լավ ընտանիք ստեղծելն է»,- շարունակում է:

Աշխատանքի բերումով ամբողջ օրը վազվզուքի մեջ՝ շատ է հոգնում, բայց վերադառնալով տուն՝ հոգնությունն անմիջապես անցնում է: Ոչ թե այն պատճառով, որ նստում կամ պառկում-հանգստանում է, այլ որ նորից լծվում է գործի, բայց այս անգամ՝ ընտանիքի համար: Դա էլ ուրիշ հաճույք է:

Երեխաները հետևո՞ւմ են ծնողների մասնագիտությանը: Ասաց, որ ավագ դուստրը հետևել է մինչև առաջին կարգային դառնալը, բայց ընտրել է լրագրողի մասնագիտությունը: Սովորում է ԵՊՀ լրագրության բաժնում, հավանաբար մարզական լրագրող կդառնա: Նրանից փոքրը սովորում է «Այբ» դպրոցում: Երրորդը՝ տասը տարեկան դուստրը, սպորտսմենուհի է, կարատեի Հայաստանի չեմպիոն: Փոքրերը հաճախում են մանկապարտեզ: «Ամեն ինչ ունենք՝ ուսանող, աշակերտ, մանկապարտեզի սան»,- իր հարստությունն է գոհ ներկայացնում: Իսկ ես մտածում եմ. «Այս կինը ժամանակ չունի հոգնելու, դրա համար ժամանակը նրա կողքով է անցնում ու հետքերը չի թողնում նրա վրա, և այդ պատճառով էլ այդպես երիտասարդ է մնում»: Իսկ նա, կռահելով միտքս, լրացնում է. «Երբ ընտանիքում ամեն ինչ հաջող է, երեխաներն առողջ են, ամեն մեկն իր հետաքրքրություններն ունենալով հանդերձ՝ իրար հասկանում են, փոխըմբռնում կա, ամեն ինչ հեշտ է ստացվում՝ տանը թե դրսում: Հաճախակի գործուղումներում եմ լինում, ամուսինս է միշտ երեխաների հետ, հոգսերս կիսում է, երեխաներն իրար օգնում են, և ես կարողանում եմ հանգիստ աշխատել»: Լսողը կմտածի, թե հավանաբար ամուսինը չի բազմազբաղ: Բայց նա Աբովյան քաղաքում հանրակրթական դպրոցի շախմատի ուսուցիչ է և մարզիչ՝ քաղաքի շախմատի դպրոցում ու նաև՝ Բյուրեղավան քաղաքում Շախմատի ակադեմիայի մասնաճյուղի մարզիչ:

Ի ամփոփումն՝ Նաիրային խնդրեցի ամենակարևոր երեք բանը նշել երջանկության համար.

- Առաջինը Սերն է ընտանիքի, հայրենիքի, մասնագիտության, դիմացինիդ նկատմամբ... Եթե սեր չեղավ, ամեն ինչ տանջանք կլինի: Մի քանի տեղ աշխատում եմ, ընտանիքում երեխաները շատ են, դժվար է, անշուշտ, բայց երբ շատ ես սիրով անում ամեն ինչ, չես զգում այդ դժվարությունը:

Երկրորդը Հավատն է: Պետք է հավատաս քո հայրենիքին, քո հաջողություններին: Չեմ սիրում դժգոհողներին, բողոքողներին: Հենց որ մեկը դժգոհում է, ասում եմ՝ բա՞ ես ինչ ասեմ: Մենք տանը պապիկ-տատիկ չունենք, օգնողներ չունենք, ամեն ինչ մեր ուսերի վրա է:

Երրորդը. պետք է կարողանաս կյանքում քո Առաքելությունը կատարել: Մարդ պետք է հասկանա, թե ինչի համար է ինքը ծնվել և անպայման մի լավ բան անի: Եթե կարողանա անել երկրագնդի համար, շատ լավ կլինի, եթե անի իր ազգի համար, ավելի լավ: Անպայման պետք է մի լավ բան կատարի: Պարտադիր չէ, որ իրեն վարձահատույց լինեն: Հասկանա, որ դա իր առաքելությունն է, ինքը դրա՛ համար է ծնվել:

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱԼԲԵՐՏ ԷՅՆՇՏԵՅՆԻ ՆԱՄԱԿԸ ԴՍՏԵՐԸ. ՍԻՐՈ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ



Երբ ես առաջարկեցի Հարաբերականության տեսությունը, շատ քչերն ինձ հասկացան, և այն, ինչ ես հիմա ասելու եմ քեզ մարդկությանը փոխանցելու համար՝ նույնպես բախվելու է աշխարհի թյուրըմբռնման և նախապաշարմունքների հետ: Քեզ խնդրում եմ այս նամակը պահել այնքան, որքան անհրաժեշտ է՝ տարիներ, տասնամյակներ, քանի դեռ հասարակությունը բավարար չի զարգացել, որպեսզի ընդունի իմ՝ ստորև բացատրածը:

Գոյություն ունի մի շատ հզոր ուժ, որի պաշտոնական բացատրությունը գիտությունն առ այսօր չի տվել: Այդ ուժն ընդգրկում ու կառավարում է մյուս բոլոր ուժերին և նույնիսկ ընկած է տիեզերքում գործող ցանկացած ֆենոմենի հիմքում: Այդ համընդհանուր ուժը, որը մենք դեռ չենք սահմանել, ՍԵՐՆ է:

Երբ գիտնականները փնտրում էին տիեզերքի միասնական տեսությունը, նրանք մոռացան անտեսանելի ամենահզոր ուժի մասին: Սերը Լույս է, որը լուսավորում է նրանց, ովքեր տալիս և ստանում են այն: Սերը ձգողություն է, որովհետև մարդկանց ստիպում է գրավել մեկը մյուսին:

Սերը ուժ է, որովհետև բազմապատկում է այն լավագույնը, որը կա մեր ներսում և թույլ չի տալիս մարդկությանը խորտակվել կույր եսասիրության մեջ: Սերը բացահայտում է ու հայտնաբերում: Հանուն Սիրո մենք ապրում ենք ու մեռնում: Սերը Աստված է, և Աստված Սեր է:

Այս ուժը բացատրում է ամեն ինչ և կյանքին իմաստ է տալիս: Այն փոփոխական արժեք է, որը մենք չափազանց երկար ժամանակ անտեսել ենք: Գուցե վախենում ենք Սիրուց, որովհետև այն միակ էներգիան է ամբողջ տիեզերքում, որը մարդ դեռ չի սովորել ղեկավարել:

Սերը հասկանալի դարձնելու համար ես մի պարզ փոխարինում արեցի իմ ամենահայտնի հավասարության մեջ: Եթե $E = mc^2$-ի փոխարեն մենք ընդունենք, որ աշխարհին բուժող էներգիան հնարավոր է ստանալ՝ Սերը բազմապատկելով լույսի արագության քառակուսով, ապա կհանգեցնք նրան, որ Սերը գոյություն ունեցող ամենահզոր Ուժն է, քանի որ այն չունի սահմաններ:

Մարդկությունը թերացել է տիեզերքի այլ ուժերն օգտագործելու և ղեկավարելու մեջ՝ դրանք դարձնելով մարդուն թշնամի, բայց հիմա հարկավոր է, որ սնուցենք ինքներս մեզ մեկ այլ տեսակի էներգիայով:

Եթե ուզում ենք, որ մարդկությունը գոյատևի, եթե ուզում ենք գտնել կյանքի իմաստը, փրկել աշխարհը և այնտեղ բնակվող բոլոր բանական էակներին, ապա Սերը միակ պատասխանն է այդ անելու համար:

Գուցե դեռ պատրաստ չենք սիրո ռումբ ստեղծել, մի սարք, որն այնքան հզոր կլինի, որ ամբողջովին կվերացնի մեր մոլորակը կործանող ատելությունը, եսասիրությունը և ագահությունը:

Այնուամենայնիվ, յուրաքանչյուր անհատ իր ներսում ունի մի փոքր, բայց հզոր սիրո գեներատոր, որը սպասում է, թե երբ դուրս կթողնեն իրեն:

Երբ սովորենք տալ և ստանալ այդ տիեզերական էներգիան, սիրելի Լիեզերլ, մենք կհաստատենք, որ Սերը հաղթում է ամեն բանի, որ այն ի զորու է գերազանցել ամեն ինչին և ամենքին, քանի որ Սերն է կյանքի բուն էությունը:

Խորապես ցավում եմ, որ չեմ կարողացել արտահայտել քեզ համար ողջ կյանքս ցածրաձայն բաբախող իմ սրտում եղածը: Միգուցե չափազանց ուշ է ներողություն խնդրելու համար, բայց քանի որ ժամանակը հարաբերական է, պետք է ասեմ, որ սիրում եմ քեզ ու քո շնորհիվ գտել եմ վերջնական պատասխանը:

Քո հայր՝ Ալբերտ Էյնշտեյն

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 24.08.2020թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: